

9055

Գ. Տ. ԱՆԴՐՈՆԻ

4955

5317

5367


ՏԵՂՄԱՆԻ

5367

Փայտագործական աշխատավայր

ՏԵՂՄԱՆԻ 20 ԿԲ.

ՀՕՄԱՆ ՅՈՒՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆ
Ա ԵՐԱԿԱՆ ՅՈՒՆ ՔԱՂԱՔ
ՀԱՅ ԵՐԱԿԱՆ ՅՈՒՆ
Ա ԵՐԱԿԱՆ ՅՈՒՆ



ԵՐԱԿԱՆ
ՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
1918

4955

ԽՈՒԼ ՎԱՅՐՈՒՄ

9055

ԳԻՒՆ և 20 ԿՈՊ.

Փոխադրութիւն ուսուելկանց

ՊՕՂՈՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ
 Ա. Եղիշեի հոգ. ԹԵՂԱՐԿ
 Տաղ Եղազարամաճք.

Արտասպած «Ռազմիկ» քերթից



ԵՐԵՒԱՆ
ՏՊԱՐԱՆ «ԿՈՒԼՏՈՒՐԱ»

1913





ԱՐԴՅՈՒՆՎ ԼԱՌԱ

Նւիրում եմ սոյն անդրանիկ փոխադրութիւնս
ՎԱՂԱՄԵՌԻԿ ՔՐՈԶՍ

ՄԱՐՈ ՅՈՎՀԵՆԻՍԻՍԵԱՆԻ

Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ի Ւ .

ԽՈՒՂ ՎԱՅՐՈՒՄ

Կառւչուկէ գործարանի գործարանատէր Միքայէլ
Իրօլիանինը սայլով գնաց մօտակայ անտառը՝ գնելու հար-
կաւոր մթերք իւր գործարանի համար։
Նա գործարանը և զբասենեակը թողեց կառավարե-
լու իւր անդրանիկ սողջկան, Աննային։

Առաջներում իրօլիանինը գործարանում կառավարիչ էր պահում, բայց այն օրից, երբ իւր աղջիկը Հէլսինգ-Փօլսի համալսարանը աւարտեց, այլևս կառավարչի պէտք չունեցաւ, աղջիկը լիովին նրան փոխարինեց:

Այս շատ հասարակ կերպով պատահեց:

Աւսանողուհին արձակուրդի ժամանակ տուն վերադառնալով, իւր հօր գործարանի գործերով հետաքրքրւեց, ամեն ինչ մեծ ուշադրութեամբ զննեց, աեղեկութիւններ հաւաքեց, և երբ համալսարանը աւարտելուց յետ վերադառնալ տուն, մի օր ասաց հօրը.

Ես տեսնում եմ, հայրէկ, որ մենակ քեզ համար շատ ծանր է այդքան գործը կառավարելը, և բացի դրանից՝ գործերը շարունակ ընդարձակելում են, ուրիշ մարդկանց ձեռը տալ այդ գործերը կառավարելու անկարելի է, ձեռնտու չէ։ Եթէ կամենաս, ես կը մնամ այստեղ քեզ մօտ, քո գործերում օգնելու։

Միքայէլը զարմանքով նայեց իւր աղջկան և ապա հարցրեց.

— Իսկ քո զբաղմունքները, չէ՞ որ դու կամենում
էիր շարունակել քո բժշկական ուսումը:

Այս, առաջ ես իսկապէս այդ բանն էի մտածում, բայց այժմ ես հասկացայ, որ տանը մնալով աւելի օգուտ կարող եմ տալ, կարծում եմ իմ այստեղ մնալս արգելք չի կարող լինել սովորելու և այդ մասնագիտութիւնը՝ զբքեր կան կարդալու, իսկ չեղածն էլ կարելի է Հելսինգ-ֆորսից բերել տալ:

Աղջկայ կարուկ խօսքերից երեսում էր, որ նա հաստատապէս վճռել է իւր հօրը օգնելու:

Ի՞նչ արած, եթէ իսկապէս դու կամենում ես գործարանի գործերով զբաղւիլ՝ դա ինձ համար անշափ յարձար և ուրախալի է. Յովհաննէսը և Մատթէոսը դեռ շատ են փոքր. ես այսուհետեւ հանգիստ կը լինիմ, որ իմ մահից յետոյ գործս կը մնայ ամուր և հաւատարիմ ձեռքում: Կիսս գործարանի գործերից ոչինչ տեղեկութիւն չունի, այսինքն նրան մեղաղբել չի կարելի, քանի որ նա զբաղւած է միշտ տնտեսական հոգսերով:

Այդ օրւանից սկսած Աննան ամբողջապէս իրեն նւիրեց գործարանական կեանքին և գործերին:

Նա ինքն էր գործարանի և զբասենեակի հաշիւները պահում, վարձելով երեք օգնականուհիներ իրեն:

Ամեն մի ըոպէ այդ հաշիւներից կարելի էր իմանալ գործերի դրութիւնը:

Աննան էր կառավարում նոյնպէս մթերքների շտեմարանը. առանց նրա գիտակցութեան ոչ մի առարկայ իւր տեղից չէր շարժւում:

Հայրը միայն ապրանքի արտադրութիւններին զնում էր, իսկ նրա բացակայութեան ժամանակ՝ այդ գործն էլ իւր դեռահաս աղջիկն էր կատարում:

Զը նայելով որ այդ գործարանում 100-ից աւել բան-ըորներ կային, բայց ոչ մի անգամ չէր պատահել, որ նրանց

մէջ անհամաձայնութիւններ առաջ դար և գործը կանգ առնէր:

Աննան գիտէր նրանց հետ վարւելու ձեր: Նա կատարում էր նրանց այն պահանջները՝ որոնք քիչ ու շատ օրինաւոր էին և գործարանին վնաս չէին կարող տալ, իսկ մերժում էր այն անհիմ պահանջները՝ որոնք վնասել կարող էին գործարանին: Բանուորները այդ շատ լաւ էին հասկացել, որ աւելորդ պահանջներ անելը դատարկ բան է և իպուր տեղը ժամանակը կորչում է:

Միենոյն է, զբանից ոչինչ դուրս չի գալ, ասում էին նրանք նոր ընդունւած բանուորներին, որոնք կամենում էին ինդրել Սննայից՝ աշխատավարձի յաւելում: Նա ոչ մի կոպէկ չի աւելացնիր:

Իսկ մենք այն ժամանակ գործադուկ կանենք:

Աւելի հասակաւոր բանուորները ծաղրելով, զլուխները թափ կը տային ասելով.

Գործադուկ մի արէք, միենոյն է, ուրիշ գործարաններում սրանից աւել չէք կարող ստանալ, և բացի զբանից՝ Աննան ձեզ ուղիղ հաշիւ կը ներկայացնի և կը բացատրէ ձեզ թէ ինչու գործարանատէրերը չեն կարող աւել վճարել. այն ժամանակ դուք կը համոզւէք:

Երիտասարդները նրանց հաւատ չընծայելով՝ անձամբ գնացին զբասենեակ, առաջարկելով իրենց պահանջները:

Աննան շատ հանգիստ և առանց վրդովելու, նրանց բոլոր հարցերին պատասխանելուց յետոյ, պարզ կերպով նրանց ցոյց տւեց թւանշաններով, որ նրանց պահանջածը անկարելի է, այդ աշխատավարձի յաւելումով գործարանը ստիպւած կը լինի փակւելու:

Ենթադրենք որ մենք մեր գործարանը փակեցինք, դուք ձեր պահանջներով կը ներկայանաք մի ուրիշ գործարանատիրոջ, նա նոյնպէս այդ պահանջներին բաւարա-

ըռւթիւն տալ չը կարողանալով, ստիպւած կը լինի նոյն-
պէս փակել իւր գործարանը: Այն ժամանակ ազատ և
պարապ մարդիկ շատ կը լինեն, ինչ պէտք է անեն նրանք.
ստիպւած կը լինին աւելի աժան օրավարձով գործելու,
որպէսզի կարողանան իրենց գոյութիւնը պահպանել:

Սյդ խօսքերի ազգեցութեան ներքոյ՝ նրանք վերա-
դարձան գործարան և այնուհետև երկար ժամանակ աշ-
խատավարձի յաւելման համար ոչ մի խօսք չեղաւ:

Մի անգամ Աննայի հայրը մեծ օգուտով քաղաքում
ապրանք ծախեց. Աննան նրա հետ խորհրդակցեց և առա-
ջարկեց որ այդ վերցրած շահի մի մասն էլ բանւորներին
բաժին հանւի. հայրը համաձայնէց:

Փողը յահճնեցին բանւորներից ամենամեծին՝ որը
պարտաւոր էր հաւասար կերպով բաժանել իւրայինների
մէջ. նա զարմանալով հարցրեց գործարանատիրուհուց.

Ինչու համար էք դուք այս փողը մեզ ընծայում:

Աննան ժպտալով ասաց.

Հայրս այս անգամ ապրանքը սովորական գնից ա-
ւելով է ծախել, ուստի այդ աւել վերցրած օգուտը նա
հաւասար կերպով բաժանում է ձեր և իրեն մէջ:

Քա բաւականի յարմար առիթ էր գործարանատիրոջ
համար, ցոյց տալու բանւորներին, որ խսկապէս գործա-
րանատէրը մտածում է նոյնպէս բանւորների համար:

Աննան, ահա հինգ ամբողջ տարի էր, որ իւր հօր
գործարանում անխոնջ կերպով աշխատում էր. նա յիշում
էր երեխն իւր ուսանողական կեանքը. ինչքան աշխա-
տանք էր գործ դրել իւր ընկերներից յետ չը մնալու հա-
մար, և ինչպէս շարունակ համալսարանի ուսուցիչը գո-
վում էր Աննայի ջանասիրութիւնը, և նրան օրինակ էր
ցոյց տալիս իւր ընկերներին:

— Օ՛, Աննա իրօլիանինը շատ հեռու կը գնայ, նա

ամեն ինչ ըմբռնում է, իմ կարդացածներից գրեթէ մեծ
մասը իւրացնում. և ես հաւատացած եմ, որ նա կը տի-
րապետէ շուտով բժշկական գիտութիւնն էլ:

Այս բոլորը Աննան յիշում էր և անցեալի գեղեցիկ
պատկերը ներկայանում նրան. քիչ չէր պատահել, որ այդ
յիշողութիւնները դառն արտասուք չը քամէին Աննայի
մեծորակ աչքերից. նա լաւ տեսնում և հասկանում էր,
որ ինքը հասարակ և խուլ վայրում է ընկած, թառամող
ծաղիկ է, ոչ ոք նրան չի սիրում, չի զբաղուում. փակւած
սենեակի մէջ, հեռու մարդկութիւնից, ընկերական քաղցր
շրջանից... նրա այդ երկարամեայ աշխատանքը մի տեսակ
մոռացնել էր տւել իւր հին իդէալները, գաղափարները,
նա մի տեսակ մեքենայ էր գարձել, առաւօտեան շատ
կանուխ գործելով մինչև ուշ գիշեր:

Ցոյս դնել երիտասարդ օգնականունիների վրայ՝
դժւար էր, թէն նրանք ամբողջ օրը թեքւած դէպի գրա-
սեղանները՝ անխոնջ կերպով աշխատում էին: Աննան
տեսնում էր այս սրտով գործողներին և վարձատրում,
բայց նրանց յուսալ և գործի ղեկը թողնել նրանց ձեռքը,
շատ դժւար էր և ոչ այնքան էլ յարմար, քանի որ դեռ
շատ երիտասարդ և անփորձ էին: Աննայի հայրն էլ էր
զարմանում, որ իւր բացակայութեան ժամանակ գործերը
այնքան հմտութեամբ էին առաջնորդւում, որ մինչև ան-
գամ, երբ գեռ Աննան չըկար ու գործարանը կառավարում
էր մի կառավարիչ, այսպիսի ապրանք չէր արտադրում
և գործերը այնպէս չէին ընթանում ինչպէս այժմ. իսկ
բանւորների անվերջ վէճերը կառավարչի օրով—անտա-
նելի էին. այժմ թէ ապրանքն է լաւ գուրս գալիս, և թէ
բանւորները հնագանդութեամբ կատարում և լուսմ են
իրենց գործարանատիրուհու ամենաչին կարգադրու-
թիւնը և հրամանը:

Միքայէլը մի քանի օրով գնաց անտառի մի կողմը՝ որտեղ նա կամենում էր գործարանին վերաբերեալ ատաղձ գնել և որը այնքան էլ մօտ չէր գործարանին:

—Ես հաւանական է հինգ օրից կամ թէ աւելի ուշ՝ մի շաբաթից կը վերադառնամ. դու գիտես, որ ես բանը չը տեսած՝ փող չեմ վճարում, ես այդպէս եմ սիրում:

—Իրաւունք ունիս, հայրիկ, այդպէս անելու, առանց ուշադրութեան և հսկողութեան ոչ մի գործ չէ կարող յաջող առաջ գնալ: Այս ասելով, Աննան համբուրւեց իւր հօր հետ, որը արդէն բարձրացել, նստել էր մի արագավազ ձիու վրայ:

—Անացէք բարեաւ, Յովհաննէս, Մատթէոս, Սիրանց, ասաց գործարանատէրը, բարձրացնելով մտրակը. ձին սլացաւ առաջ, թողնելով Աննային և երեխաներին միւնոյն կանգնած տեղում:

Նա անցաւ հովտի միջով, որտեղից մեծ աղմուկով հոսում անցնում էր մի գետակ և, որը բանեցնում էր Միքայէլի գործարանի անիւները:

Գործարանի երկյարկանի շինութիւնը տարածւած էր երկաթուղու գծի հետ զուգահեռաբար, բաժանւած լինելով մի խոր գետով:

Իրօլիանինը շինել էր տւել իւր գործարանի մօտ մի ջրանցք, որպէսզի ջուրը բանեցնէ իւր գործարանի մեքենաների անիւները: Նոյն տեղում մի ուրիշ բացւածք էր պատրաստել՝ որ ջրի աւելացման, հեղեղի ժամանակ՝ ջուրը բաց թողնուի մի ուրիշ կողմ, որ հեղեղը չը կարողանայ մի որևէ վնաս տալ գործարանին:

Թէւ ամբողջ տարին ջուրը քիչ չէր լինում գործարանի անիւները պտտեցնելու համար, բայց և այնպէս, նա երկու շոգեմեքենայ էր բերել տւել, որ հակառակ դէպում գործը երեսի վրայ չը մնայ, թէւ նրանց օգնու-

թեանը շատ քըչ էր պատահում որ դիմէին, չէ՞ որ ջուրը ձրիապէս գործում էր, էլ ի՞նչ կարիք կար այդ շոգեմեքենաներին:

Նոյն գծի վրայ գտնւում էին ուրիշ ճախարակային գործարաններ, որոնք նոյնպէս օգտւում էին ձրիապէս ջրից:

Գետից մի փոքր վերև, դէպի սարը տարածւած էր ոչ այնքան մի մեծ գիւղ. Ներքեցից գեղեցիկ կերպով երևում էր լենտի նման տարածւած ճանապարհը, որը բարձրանում էր աւելի ու աւելի վեր: Ճանապարհի միւս կողմը, որտեղ տարածւած էին գործարանների շինութիւնները, ծածկւած էր եղևնանտառով. ահա հէնց այդտեղ էր ապրում գործարանատիրոջ ընտանիքը. միայն Աննան զրասենեակին կից մի սենեակում էր ապրում, նա պէտք էր առաւօտեան վաղ վեր կենար և գործով զբաղւէր, ահա հէնց այդ պատճառով էր նա այդ սենեակը իրեն համար ընտրել, թէև նա ճաշում էր մեծ տան մէջ, բայց առաւօտեան կօֆէն և երեկոյեան թէյը բերում էին այդտեղ: Բանւորների բնակարանը շինւած էր սարի ստորոտում. հեռակա կարելի էր նկատել նրանց կարմիր պատերը և սկ տանիքը. աւելի ցած ընկած էին գաշտը և մարգագետինները, որոնք ծածկւած էին լինում շարունակ թարմ խոտով, գեղեցիկ ծաղիկներով, կանաչներով. իսկ այդ բոլորի միջով անց էր կենում փայլուն գետակը: Յուլիս ամսի կէմն էր. այս տարի ամառը շատ երաշտ և տաք էր, երբեմն միայն անձրեսում էր՝ որով կարողանում էին բոյսերը քիչ թարմանալ:

Գործարանում գործը եռում էր:

Աննան իւր հօրը ճանապարհ դնելուց յետոյ, եկաւ զրասենեակ և իւր սովորական տեղը բռնեց:

Գրասենեակում նստած զբաղւած էին նրա երեք օգ-

Նականուհիները. Նրանք այնքան զբաղւած էին, որ Աննայի ներս մտնելուց զլուխներն անդամ չը բարձրացրին. գործ շատ կար և հէնց այդ պատճառով էլ պէտք է նըրանք գործէին, առանց մի բոսէ ձեռները հանգիստ թողնելու:

— Հեղինէ, ասաց Աննան զբաղւած աղջկան, Իլմանինի ֆիբրմայի հաշիւները զրել վերջացրէլ ես:

Աղջիկը լուս կերպով տեսրակների միջից մի թերթ գրած թուղթ հանելով, ներկայացրեց Աննային, որը ուշադրութեամբ զննելուց, յետ տւեց երկրորդ պաշտօնունուն, ասելով.

— Սօնա, վերաբատապիր այս հաշիւը: Կարճահասակ և լիք Սօնան իսկոյն վեր կացաւ տեղից և արագ կերպով մկնեց հաշիւները պողպատէ գործիքի տակ վերաբատապել: Գրասենեակ մտաւ գործարանի գործակատար Յովհաննէսը.

— Յարգելի՛ Աննա, գործարանում քլօրի պէտք կայ: Աննան վերջին հայեացք ձգեց գրասենեակում գործող պաշտօնուհիների վրայ, ապա պատի վրայից կախւած մեխից ցած բերեց մի մեծ կապ բանալիներ, կապեց գոգնոցը և դուրս եկաւ բակը:

Ապրանքների շտեմարանը դժունում էր անտառի մօտ: Գործարանատիրունին իւր ձեռքով բաց արեց և դուրս բերեց զուան մեծ կողալէքը՝ աղամարդու պէտ:

Դուռը ծանր բացւեց. Քիմիական բաղադրութիւններից պատրաստւած լիքը ամաններից բուրող անախորժ հոտը դիպաւ ներս մտնողների ոռւնգերին. Աննան գործակատարի հետ ներս մտաւ:

— Վերցրէք ինչքան հարկաւոր է, ասաց Աննան: Գործը վերջացնելուց յետ՝ դուռը կողալով գնացին

դէպի գործարան:

Մեծ տակառները լցւում էին բնափայտի մանր արւածքի զանգւածով: Բանւորները շտապ-շտապ կրում էին բնափայտը և լցնում աւելի մեծ տակառների մէջ, որը զանգւածով մեքենայի ձագարից էր ծորում:

Աննան հմուտ գործին, ակնարկ ձգեց այդ կենդանութիւն ստացած աշխատանքին. այդ զանգւածից մի բուռ վեր առաւ տեսնելու՝ արդեօք մանր է աղացւած. յետոյ գնաց մեքենավարի մօտ՝ հարցնելով:

— Զրանցքում ջուրը բաւարար է թէ ոչ, անիւները լաւ շարժւում են:

Ծեր մեքենավարը գլխով գրական պատասխան տւեց; շարունակելով իւր գործը:

Աննան սովոր էր այդպիսի պատասխանների. ծեր մեքենավարի վրայ էլ այնքան նա չը բարկացաւ:

Այդանից նա անցաւ մի ուրիշ բաժանմունք, որտեղ աղւած բնափայտը փոխւում էր խտացած թանձր զանգւածի, այսինքն քառչուկի:

Գործարանատիրունին ամեն ինչ նայեց, կարգադրեց. Նա տեսաւ նոյնպէս պատուհանի առաջ նստած աղջիկ բանւորներին, որոնք բաց էին անում կառչուկի յետ արւած շերտերը:

Իւր բոլոր տեսածներից գոհ, նա վերադարձաւ դէպի գրասենեակ: Մինչև այնաեղ հասնելը նա համրեց բակի մէջ եղած պատրաստի ապրանքների հակերը:

— Յարգելի՛ Աննա, ձեզ հեռախօսի մօտ կանչում են, գիմաւորեց նրան զուան շէմքի մօտ Սօնան:

Աննան լուս և պլոխը քարշ գցած՝ գնաց հեռախօսի մենեակը:

— Երկու հոգի բանւոր ձեզ գրասենեակում սպասում էն, ասաց նրա յետերից Սօնան:

Հեռախօսի մօտ երկար չը մնաց Աննան, իսկոյն վերադարձաւ գրասենեալ, որի մուտքի մօտ նստել էին երկու տղամարդ: Երկուան էլ շատ հասարակ հագուստ ունէին հագած:

Առաջնի կոշտ ձեռքերից, երեսի թափածոտ գծերից, թեքւած մէջքից պարզ երեռւմ էր, որ նա վաղուցւայ բանւոր պէտք է եղած լինի և ծանօթ բոլոր մեքենաներին և և գործիքներին: Նրա ընկերը թէև շատ էր ուզում իւր ընկերոջը նմանի, որպէս հին բանւոր, բայց նկատում էր, որ նա այնքան էլ շուտ չէ ծանօթացել գործարանի կեանքին. Նրա կազմւածքը լիքն էր, ուժեղ, առողջ. դեղին, թաւշանման հաստ բեխերը դէմքին առնական, սիրուն ու վսեմ երեսյթ էին տալիս. խիտ մագերն անհոգ կերպով գուրս էին թափւած զիլարկի տակից և սփուած նրա գեղեցիկ ձւածե կերպարանքի վրայ. շագանակազոյն աչքերը վառվուն կերպով այս և այն կողմն էին շուռ գալիս. մի խօսքով իսկական տղամարդ էր: Աննային տեսնելով՝ ծերը վեր կացաւ, հրելով իւր ընկերոջը նոյնպէս վեր կենալու:

— Մենք եկել ենք ձեզնից խնդրելու արդեօք ձեր գործարանում ինձ և իմ այս ընկերոջս համար տեղ կը լինի՞ գործելու:

Աղջիկը ուշադրութեամբ նայելով խօսակցին, իսկոյն ճանաչեց իրենց անցեալ տարւայ բանւոր թովմասին.

— Աւելի շուտ, ես լաւ չը գիտեմ, հարկաւոր է գործակատար Յովհաննէսից հարցնել, բայց ես չեմ կարծում որ մեր պայմանները ձեզ հաճոյ լինի, թովմաս, քանի որ դուք անցեալ Յունւար ամսին ասացիք որ շտբաթական հինգ մարկ ձեզ բաւականութիւն չէ կարող տալ, և այն օրից ի վեր մեր պայմանները չեն փոխւել, մնացել են նոյն աշխատավարձերը՝ որոնցով դուք դո՞հ չէիք, ուրեմն

իմ կարծիքով դուք համաձայն էք կարող լինել այս պայմաններին:

Թովմասը ամբողջ մարմնով կծկւեց.

— Իսկ եթէ այժմ ես հին պայմաններով համաձայն լինիմ, ասաց թովմասը, հաւատացած լինելով, որ կրկին մերժման պիտի հանդիպի:

— Հազիւ թէ դուք մեզ պէտք լինիք, քանի որ հայրս մի անգամ դուրս արած բանւորին կրկին տեղ չէ տալիս իւր գործարանում:

— Յարգելի՞ օրիորդ, այս անգամ զիջեցէք, լուեց մինչև այդ ժամանակ լուռ կանգնած երիտասարդ բանւորի ձայնը:

Աննան յանկարծ սարսոաց. այդ ձայնը նրան ծանօթ թւաց, կարծէք թէ ի տեղ նա լսել էր այդ ձայնը. հակառակ իւր կամքին՝ սկսեց ուշադրութեամբ նրան նայել.

«Ո՛չ, ես նրան չեմ ճանաչում» ասաց Աննան ինքնիրեն:

— Ես երբէք ձեզ մօտ չեմ եղել, ինձ ընդունեցէք, ես ձեր բոլոր պայմանների հետ համաձայն և շատ լաւ բանւոր կը լինիմ, միայն խնդրում եմ, թովմասին նոյնպէս ընդունեցէք:

— Ի՞նձ ևս ընդունեցէք, յարգելի՞ օրիորդ, առաջւայ գատարկաբանութիւններն այլևս ինձնից չէք տեսնիլ, աղերսանքով խնդրեց ձերը: Ահա երկու օր է, որ ոչինչ չեմ դրել բերանս...

Աննան տատանման մէջ էր. ընդունել վերջինին, թէ ոչ.

— Շատ լաւ, եթէ գործակատարը ին ձկը յայտնէ, որ գործարանում ազատ տեղ կայ, այն ժամանակ ես ձեր երկուսին էլ կընդունեմ մեր գործարանում: Այս ասելով Աննան գնաց հեռախօսի սենեակը:

Երիտասարդ բանւորը աչքով արեց ծեր բանւորին:

— Երկու բանւոր երէկ ուղարկւած են հիւանդանոց, պատասխանեց հեռախօսով գործակատարը:

— Դուք անչափ բախտաւոր էք, թովմաս, ասաց Աննան. երկու բանւորի կարիք կայ մեր գործարանում: Հեղինէ, շուտ եկ, զրասենեակի պաշտօնահան երկու բանւորական աետրակներ գրիր, և թող թովմասն ու իւր ընկերը ստորագրեն:

— Ինչպէս է ձեր անուն ազգանունը, հարցընց չեղինէն երիտասարդ բանւորից, քիչ կարմրելով:

— Ա... Ադամ Խիրվոնեն, շտապեց պատասխանել Երիտասարդը:

«Զարմանալի է, չը գիտեմ ես այդ ձայնը որտեղ եմ լսել, մտածում էր Աննան ինքն իրեն:

Նոր ընդունեած բանւորները զրասենեակից դուրս եկան, աշխատասէր գործակատարուհիները սկսեցին իրենց աշխատանքը: Ծաղիկների ախորժ բուրմունքը ներս էր թափանցում զրասենեակի բաց պատուհանից, լսում էր ծաղկից ծաղկի թռչկոտող մեղուների ախորժելի բզզոցը:

Սըեղակի փայլուն ճառագայթները նոյնպէս պատուհանից ներս թափանցելով, սահում էին աշխատող աղջիկների թաւշագոյն մազերի վրայով, ոսկեզօծելով բոլոր տետրակները, աշխատողներին կուրացնելու չափ:

Գրասենեակի փոքր սենեակում օդը խեղդիչ էր. տօթը սաստկանում էր. թոյլ ձայնով շոգեմեքենան իւր կայրանին մօտենալը յայտնեց:

— Շուտով 12-ը կը լինի, ցած կերպով ասաց գործակատարուհիներից ամենափոքրը, Աննան, ես զարմանալի կերպով քաղցած եմ:

Մը... լսեց Աննայի անբաւարար ձայնը, որը կարողացել էր իւր սուր ականջներով այդ խօսքերը լսել:

— Ուրիշներին մի խանգարէք գործելու: Աշխատանքը երկար չը տեեց:

Լսեց կէսօրւայ հանգատի և ձաշի գանգը: Աննային հեռախօսով կանչեցին ձաշի: Աննան առանց շտապելու, վերջացրեց իւր գործը և ուղերւեց դէպի տուն:

Գործարանի եռուն կեանքը խաղաղւել էր. երկու օրապահներ նստել էին գործարանի դռան առաջ հողի վրայ և ախորժակով ուտում էին կազարմից ուղարկւած իւղ և հացը:

Աննան շուտով տուն հասաւ: Մինան, Աննայի մայրը, որ իւր աղջկայ բանւորութիւնը գիտեր, այսինքն տուն գալուն պէս պէտք է սեղանը պատրաստ լինէր, հրամայեց ծառային սեղանը պատրաստելու, երբ տեսաւ Աննայի գալուստը:

— Բարի օր, մայրիկ, այսօր լաւ քնեցի՞ր, լաւ զգմւմ ես քեզ, ասաց Աննան, համբուրելով իւր մօրը, որի ամենօրեայ սովորութիւնն էր այդպէս դիմաւորելու իւր մօրը:

— Շնորհակալ եմ, անչափ լաւ եմ, ասաց Մինան:

Այսուհետեւ բոլորը նստեցին սեղանի շուրջը ձաշելու: Ուտելիս ոչ ոք չէր խօսում, սա Միքայէլ իրօլիանինի օրէնքն էր, որ ուտելիս չը պէտք է խօսել, «զա կը նմանի երկու գործ մի անգամից կատարելուն»:

Բայց այսօր, հակառակ սովորութեան, Աննան սկսեց խօսել:

— Քիւթս, մայրիկ, ես այսօր կրկին արտաքսւած թովմասին մեր գործարանում բանւոր ընդունեցի:

Մինան սարսուռ զգաց. Թոմասը նրա համագիւղացին էր, մի քիչ էլ բարեկամ. նրանք երկուսն էլ մի գիւղում էին ծնւել. մանկութեան օրերում նրանք միշտ միմեանց հետ էին խաղում: Մի առժամանակից յետոյ, երբ

Թովմասը մեծացաւ, քիչ էր մնում որ նրա հետ ամուսնանար, հէնց այդ ժամանակ Իրօլիանինը որտեղից որտեղ գտնւեց և Մինային իրեն սեփականացրեց:

— Այդ բանը դու ինչու արիր, ասաց մայրը ջղայնաբար, դու ինքդ էլ լաւ գիտես որ նրա ներկայութիւնը այստեղ ինձ համար շատ ծանը է:

— Ա՛խ, մայրիկ, նա ինձ այնքան աղերսեց և իւր խեղճութիւնը խոսառվանեց, որ ես այլիս համբերել չը կարողացայ:

— Նրան կարող էիր մի քանի մարկ տալ և նա շնորհակալ լինելով, կը հեռանար. բայցի զրանից, դու գիտես որ նա հարբեցող է, խմելիս էլ սկսում է անկարգութիւններ անել, որը անչափ վատ է ազգում հօրդ վրայ:

Աննան իւր սխալը հասկանում էր, բայց իրեն չը հասկանալու էր գնում.

— Մայրիկ, դու քրիստոնէական հաւատով չես մտածում, չէ՞ որ տէրը պատւիրել է մեզ միշտ ներել մեղաւորներին. իսկ դու...:

Աստւածային պատւիրանի մասին պառաւը լսելիս, իսկոյն նկատելի եղաւ իւր փոփոխութեամբ:

— Դու իրաւունք ունիս, Աննա, պէտք է միշտ մեղաւորներին ներել, եթէ ոչ նա էլ մեր մեղերը չի ների, ասաց Մինան մտածելով:

— Այժմ տեսնում ես, մայրիկ, որ ես իրաւունք ունէի այդպէս վարւելու:

— Միայն, սիրելի Աննա, ինդրում եմ, նրան ասես, որ այստեղ չը գայ, չերեայ իմ աչքին, ես նրան տեսնել չեմ ուզում:

Նոր ընդունւած բանւորների հարցը արդէն փակւած էր, բայց Իրօլիանինի մեծ որդին, տասներկու տարեկան Յովհաննէսը՝ գժգոն կերպով ասաց.

— Էլի այդ անիծւած Թովմասը ուէտք է մեր խաղաղնդակները այս ու այն կողմ ձգի, մեր Եարվային նեղացնի. (Եարվան երեխանների ամենասիրելի շունն էր, որը միշտ նրանց ամեն տեղ գնալիս հետևում էր). մեր շինած ցանցերը էլլի պիտի դուրս քաշի:

— Ես նրան կապսպրեմ, որ այսուհետեւ իրաւունք չունենայ ձեզ հետ այդպէս վարւելու, ասաց Աննան.

— Հա, ասա, եթէ ոչ ես նրա ոտքը փայտով կը կոտրեմ, ասաց տղան չը համբերելով:

Մայրը գժգոն իւր որդու վերջին խօսքերից՝ զլուխը թափ տալով ասաց.

— Յովհաննէս, միթէ այդպէս կարելի է վարուել, հաւանական է, որ դու մոռացած լինես քահանայի ասած խօսքերը, որ «փոքրերը միշտ պարտաւոր են իրենցից մեծերի հետ պատւավ վերաբերւելու»:

— Զեմ մոռացել, մայրիկ, բայց Թովմասը չէ որ ինձնից մեծ չէ, նա մի հասարակ բանւոր է, իսկ ես գործարանատիրոջ որդին:

— Լոիր, Յովհաննէս, ինչեր ես խօսում, ասաց Աննան բարկացած. հեռացիր սեղանի մօտից, յիմար տղայ, դու դեռ փոքր երեխայ ես, ինչ քո ժամանակդ է այդպիսի դատարկ խօսիլը:

Յովհաննէսը վիրաւորւած սենեակից դուրս եկաւ, որին հետևեցին միւս երեխանները:

Սեղանի մօտ մնացին մայրը և աղջիկը:

— Տեսնում ես, մայրիկ, որ երեխանների մօտ ամեն ինչ չի կարելի խօսիլ և մէկին հակալրութիւն ցոյց տալ:

Մայրը աւելի մօտեցաւ Աննային զլուխը քարշ գցած և մեղաւորի պէս ասաց.

— Աննա, սիրելի աղջիկս, ես ինքս էլ լաւ հասկանում եմ, որ ոչ ոքի հակալրութիւն ցոյց տալ չէ կարելի,



այն էլ Թովմասին։ Մեղք էր, որ ժամանակին նրա հետ չամուսնացայ, բոլորը իմ մեղքս է։ հանգուցեալ հայրս լսել անգամ չուզեց, որ նրա կին դառնամ. ինձ նա շատ էր դուք դալիս, գեղեցիկ էր նա, բարձրահասակ, վայել-չակաղմ, առոյդ... Այժմ նա ընկած, փչացած է, առաջւայ հետքերն անգամ չեն երկում նրա վրայ. այն ժամանակ նա այնքան բարի էր, իսկ այժմ, ինչպէս դու ես ասում, միայն չարութեամբ է տարւած. ես նրան առաջ շատ էի խղճում, իսկ այժմ..,

— Սիրում էիր դու նրան, մայրիկ։

— Ոչ, ես նրան չեի սիրում, ուղիղը կասեմ քեզ, բայց նա անշատի դուք էր գալիս ինձ. դու դեռ երիտասարդ ես, լաւ կարող ես հասկանալ, թէ ինչ ասել է մէկին դուք գալ. ես հաւատացած եմ, որ այդ բանը քեզ էլ է պատահել, հէնց համալսարան եղած ժամանակ. քեզ ոչ դուք չե եկել, ուղիղն ասա, Աննա, հարցրեց մայրը Աննայից։

Աղջիկը լոեց. Նրա սիրաը սկսեց դողալ, նա մտարերեց մի ուսանողի, Ալեքսանին, որ շատ շուտով նրա ընկերների մէջ նա ջոկեց. այդ ըսպէին նա պարզ կերպով յիշեց նրա վայելուշ դէմքը, ամենօրեայ մարմնամարզական խաղերը, որոնք համալսարանում առողջապահական տեսակէտից բոլորին կատարել էին տալիս։ Նա գեղեցիկ էր, երիտասարդ, առոյդ... Աննային այդ երիտասարդը շատ դուք եկաւ, իրա ժամանակին յետ չը մնաց նոյնպէս Ալեքսանը, համակրութիւնը փոխելով սէրի։

Բայց նրանց սիրաբանութիւնը հէնց սկզբումն ընդհատւեց. Ալեքսանը ծնողների կարգադրութեամբ ուղևորւեց Զւիցարիա ուսանելու. Աննան շատ ախրեց նրա հեռացումով, թէկ մի առժամանակ նրանք միմեանց հետ նամակադրութիւն ունեցան։

Նա նրան այն ժամանակ մուացութեան տւեց, երբ իրեն նւիրեց զիտութիւններ ուսանելու։ Երբեմն, երբ նրան յիշում էր, այդ միայն երազ էր թւում։

Մօր հարցերը Աննային կրկին յիշեցնել տւին իր անցեալի քաղցր յիշողութիւնները, օրերը. նրա սիրաը սկսեց սաստիկ բարախել և ինչ որ քաղցր բան զգալ. նա այդ մասին շատ էր մտածել, բայց այսօրւայ նման երբէք այդքան սաստիկ կերպով իւր սիրու չէր ալեկոծւել։

— Ի՞նչ ես լսել, Աննա, ասաց նրան մայրը, կարծես նրան քնից արթնացնելով։

— Այն բաները, ինչ որ այժմ քեզ պիտի ասեմ, սիրելի մայրիկ, այդ մի ըսպէական երազ էր, միայն երազ...։

Նրա դըստթիւնը այնքան ծանր էր այդ ըսպէին, որ չը կարողանալով համբերել, մինչև այդ օրը ըոլորից ծածուկ բաները սկսեց պատմել իւր մօրը, ամեն ինչ։

— Աննա, աղջիկս, հէնց այդպէս էլ ինձ է պատահել, ասաց Մինան, երբ Աննան արգէն պատմել, վերջացել էր ամեն ինչ և նա մօտենալով՝ սկսեց շոյել փաղաքշանքով աղջկայ խիտ մազերը։

Լուեց թոյլ ձայնով դործարանի զանգի զողանջը, որը յայտարարում էր կեսօրւայ հանգստի վերջանալը։

— Ես պէտք է գնամ, մայրիկ, արգէն ժամանակ է գործելու։

Աննան ծածկեց գլուխը և պատրաստւեց դուրս գալու։

— Սպասիր, աղջիկս, ես էլ ուղում եմ քեզ հետ մի քիչ տեղ գալ, ասաց նրա յետից մայրը։

Աղջիկը սենեակի դուն մօտ կանգ առաւ։

Մինան թիկն տալով Աննային՝ սկսեց աստիճաններից ցած իջնել։

— Այնքան էլ հեռու չեմ գալ, գործարանին չը հասած, կը վերադառնամ, հեռոցս ինձ թոյլ չի տալ աւելի հե-

ոռւ գնալու, մանաւանդ, ես պէտք էլ չունիմ այնտեղ գալու...

— Այս, մայրիկ, աւելի յաւ է դու գոծարան չը գաս: Երկուան էլ լուռ շարունակեցին ճանապարհը, մինչև որ երևացին գործարանի կարմիր պատերը:

— Հիմա ես կը վերադառնամ, ասաց Մինան:

— Մենակ կարող ես գնալ, մայրիկ:

— Անհանգիստ մի եղիր, կը գնամ:

Պառաը սկսեց ծանրաքայլ և հեալով բարձրանալ սարը, դէպի տուն: Աննան մի քանի անգամ յետ նայեց տեսնելու նրան որ գնում է թէ ոչ, և ապա արտօրէն ներս մտաւ գրասենեակը:

Փակ դուան մօտ արդէն սպասում էին երեք գործակատարուհիները և գործակատար Յովհաննէսը:

— Յարգելի Աննա, ձեզ են սպասում ապրանքը լցնելու և երկաթուղու կայարանը տանելու:

— Թող պատրաստեն, ես այս ըոպէիս գալիս եմ, պատախանեց գործակատարին Աննան և բաց անելով զբասենեակի դուռը, ներս մտաւ. նրան հետեւցին գործակատարուհիները:

«Անա իմ գործը, իմ նպատակը, իսկ ես ինչ որ վերացական մտքերով եմ տարւած» մտածում էր Աննան ինքն իրեն:

Իսկապէս կամենում էր վերջնականապէս իւր ուղեղից դուրս նետել այդ հին յիշողութիւնները:

Նա անհասկանալի կերպով սկսեց Սօնային բացարել ինչ որ հաշիւ գրելու համար:

Այնքան էլ ոչ մեծ սայլերը բարձւած էին կառչուկէ գանդւածի հակերով, որոնց ծանրութեան տակ սկսել էին սայլերի անիւները միանւագ ճռճռալ: Գործարանի դռան առաջ կանգնել էր Աննան:

Գործակատարին հաւատ չընծայելով՝ նա ինքն էր համրում գնացող սայլերի վրայ եղած ապրանքի հակերը:

Քամին շուռ էր տալիս մոխրագոյն շրջազգեստը այս ու այն կողմ, որտեղից երեսում էին աղջկայ լիքը ոտքերը, հագած տեղական կոշտ և ամուր կօշիկներ:

Ուժեղ քամին շուտով սաստիկ փոթորկի վոխւեց:

Ծղօտեայ գլխարկի փոխարէն նա ծածկել էր իւր գլուխը մի հասարակ թաշկինակ. քամին կարծէք թէ կամենում էր խլել հեռացնել նրա գլխից այդ թաշկինակը, որի տակից սկսել էին գուրս թափւել զլիի խիտ մազերը և քամու հոսանքից այս ու այն կողմ ցրւել:

Շրջազգեստի ուռչիլը, մազերի գուրս թափւիլը մի տեսակ գեղարւեստական տիպ էին տալիս Աննայի դէմքին:

— Բոլորը հարիւր տասնութը հակ, ասաց Աննան, վերջին գնացող սայլը համրել վերջացնելուց յետոյ:

— Հարիւր տասնութը հակ, ասաց ցած կերպով Յովհաննէսը. ես գնում եմ ապրանքը երկաթուղու կայարանին յանձնելու:

— Լաւ, գնացէք:

Դոները փակւեց. Աննան իւր շրջազգեստը և նիսի թաշկինակը ուղղելով՝ գնաց գրասենեակ:

Սենեակի օղը բաւականին թարմացել էր քամու հոսանքից: Տօթ եղած ժամանակ գործակատարուհիները աշխատանքը գաղարեցրել էին, իսկ այժմ նրանք ջանասիրութեամբ սկսել էին աշխատել: Նրանք երբեմն աչքի տակով նայում էին գործարանատիրուհուն՝ մտածելով թէ կրկին աշխատանք չաւելացնի իրենց վրայ: Բայց նա զբաղւած էր. վաղը շարաթ էր, պէտք էր բոլոր բանւորների շաբաթական աշխատավարձը պատրաստել:

Յօնքերը կիտած, նա անթարթ նայում էր իւր առաջ դրւած հաշիւներին: Մնդուկը պակասում էր և ու-

զիդ չէր գալիս. այդ շատ էր չարացնում նրան. նա իւր ամբողջ ուշադրութիւնը կենտրոնացրել էր թւանշանների վրայ, երբեմն ձախ ոտքը կամաց խփում էր յատակին, կծոտում էր իւր շրթները, բայց և այնպէս երկար չարչարւելուց յետ, կրկին իւր սիալը չը կարողացաւ գտնել:

— Հեղինէ, այս հաշւեցէք, կարելի է դուք կարողանաք սիալը գտնել, ես թւանշանները խառնել եմ, ասաց Աննան, աշխատելով իւր ներքին յուզմունքը ծածկել Հեղինէից:

Հեղինէն իսկական ֆիննի տիպ ունէր. հասակը միջակ, լիքը, կլոր երես. շագանակագոյն աչքեր, վուշի նման մազեր. լսելով Աննայի հրամանը՝ վերցրեց հաշիւը և սկսեց ուշադրութեամբ հաշւել:

Աննան պարապ նստել չէր սիրում, վեր առնելով նամակների տեսրակը, սկսեց գործին վերաբերեալ նամակները աչքի անցկացնել:

Յանկարծ սաստիկ քամին բաց պատուհանից ներս լցւեց և գրասեղանների վրայ եղած թղթերը դէս ու դէս ցըւեց. Աննան գժգոհ վեր թռաւ, առելով Սօնային:

— Փակի՞ր դուռը:

Նա սկսեց պատուհանից դուրս նայել: Սաստիկ քամին սարսափելի փոթորկի փոխւեց. չաստ և ամուր ծառերը թիքւում էին քամու ուժգին հարւածից՝ ինչպէս հասարակ ձեռնափայտեր. ամպի նման փոշի բարձրացաւ. հեռագրի և հեռախօսի լարերը սկսեցին զօղանջել:

Անտառում լսւեց հզօր ճայթիւն, փոթորիկը միմեանց յետեից ծառեր էր կոտրատում, արմատափիլ անելով նրանց. Լսւեց երկաթեայ թիթեղի ձայն. դա գործարանի տանիքի թիթեղն էր, որը քամուց թուլանալով՝ դուրս էր շպրտած հեռան, գետի մէջ:

Գործարանի տանիքի թիթեղները սկսեցին միմեանց

յետեից պոկ գալ և օդի մէջ տարուբերւելով, ընկնել հողի վրայ այս ու այն կողմ:

Յանկարծակիի եկածի նման Աննան դուրս եկաւ գործարանի բակը, բայց քամին այնքան սաստիկ էր, որ նոտքի վրայ կանգնել անդամ չէր կարելի:

Երկնքի վրայ սկ ամպեր երևացին.

— Յարգելի Աննա, լսեց աղջիկը գործակատար Յովհաննէսի ձայնը, գործարանի մեծ անիւր սկսել է պտոյտ գալ, ես կարգադրեցի որ բոլոր բանւորները դուրս գանց գործարանից, վտանգաւոր է, կարող է վերի յարկը փուլ գալ, այն ժամանակ բոլորը վլատակի տակ կը մնան:

Բոլորովին մթնեց, ու ամպերը ինչպէս թռչունների երամ գնում էին Երկնքի երեսով, ծածկելով ամեն ինչ: Փոթորիկը շատ վտանգաւոր էր, ինչպէս մի վայրենի գաղան, միմեանց յետեից արմատափիլ էին լինում հաստարմատ ծառերը, որոնց ճարճատիւնը մի տեսակ սարսուռ էր ազգում մարդու վրայ:

Աննան գրսում կանգնել չը կարողանալով կրկին ներս մտաւ գրասենեակ:

Երեք գործակատարուհիները ծածկւել էին մի անկիւնում, պատուհանից հեռու, և ամբողջ մարմնով գողզում էին:

— Աշխարհի վերջը չէ, հարցրեց Սօնան Աննայից վախիվելով: Բայց վերջինս մտածում էր գործարանի շինութեան վրայ, չը լսեց Սօնայի հարցը և չը պատասխանեց:

— Տէր Աստւած, այժմ տեսնես գիւղում ինչ են անում, ասաց Վարգանոյշը գողզողալով:

Միայն Հեղինէն լուռ կանգնել և պատուհանից գէպի դուրս էր նայում:

Յանկարծ մութ ամպերի վրայով սահեց վայրկենա-

պէս կայծակը, լուսաւորելով իւր շրջակայքը. լուեց ամպերի դղբգոցը. իսկ քիչ յետոյ վայր ընկան անձրեի առաջին կաթիները, որոնք սկսեցին արագօրէն, թմբկահարելով թափէիլ տանիքի և պատուհանի վրայ:

Երկար չը տեսց փոթորիկը, սկսեցին երկնքի երեսից սև ամպերը ցրւել:

Անձրեի սաստիկ տարափը հեղեղել էր բոլոր ձորերը, դաշտերը, որոնք սկսեցին ամեն կողմից հոսել դէպի գետակը: Երկինքը պարզւեց, սկսեց լուսաւորւել. անձրել դադարեց:

Աննան գրասենեակից դուրս եկաւ:

Փոթորիկը քիչ վաս չէր տւել գործարանին:

Ամբողջ բակը ծածկւած էր երկաթեայ թիթեղներով. գետը յորդելով, քանդել տարել էր ջրանցքը. գործարանի շտեմարանի մի կողմը նոյնպէս քանդել էր, գործարանի անիւր կանգ էր տոել, փշրւել էին պատուհանների ապակիները: Այս բոլորին Աննան տխուր կերպով նայում էր և ինքն իրեն հաշւում, թէ ի՞նչքան փող կը ծախսէ նորոգելու համար:

Ճանապարհին ութը սայլ շուռ եկաւ ջրի մէջ, ջուրը մի քանի հակ մղեց գետի մէջ, ասաց Յովհաննէսը տխուր գէմքով, որ կարծէք թէ այդ բանի պատճառը ինքն եղած լինէր: Աննան իւր ուսերը շարժեց, սպասելով աւելի վատ լուր լսելու:

— Շուտով կարգադրէք որ ջուր ընկածները գուրս հանւին, պէտք է գործը չուշացնել, նորոգեցէք շուտով գործարանի տանիքը... ասաց Աննան՝ շատ սառնարիւն, նայելով բոլոր այդտեղ կանգնած բանւորներին: Արեգակը դուրս եկաւ ամպերի տակից և լուսաւորւեց բոլոր աւերակ դարձածների պատկերը,

Շատ աշխատանք էր հարկաւոր գործարանը կրկին

կարգի բերելու:

Աննան անչափ ուրախ կը լինէր, որ հայրը հէնց այդօրը վերադառնար, բայց նրան սպասել չէր կարող. ինքը մենակ սկսեց գործը կարգի բերել:

Ամբողջ օրը գործը կանգ առաւ. հեղեղը վշացրել էր ջրանցքը:

Անիւները չէին գործում:

Բանւորները Աննայի կարգադրութեամբ սկսեցին ջրանցքը ամբացնել, գործարանի տանիքի թիթեղները կարկատել:

Նրանք անչափ ջանապիրութեամբ էին աշխատում: Սպասածից հակառակ, իւր անխոնջ աշխատանքով բանւորների մէջ նկատելի էր թովմասը. նրա ընկեր Ագամը յետ չէր մնում թովմասից, որ երկրաչափի հմտութեամբ շինել տւեց ջրանցքը: Անիւները սկսեցին պտոյտ գալ. նորից վերակենդանացաւ գործարանը:

Աննան այս բոլորին ականատես եղաւ. նա վարձատեց նրանց մի փոքրիկ գումարով, այդ նորոգութիւնների համար:

— Շնորհակալ ենք ասացին մի քանիսը:

Բայց մեծամասնութիւնը լոեց. և իսկապէս նրատւածն այնքան էլ շատ չէր:

— Իրոլիանինի համար այս չնչին գումարը ինչ արժէ, մինչն անգամ նշմարելի չէ, ասաց հեռում կանգնած բանւորներից մէկը՝ փող ստացող բանւորներին:

Թովմասը իւր կարծիքը վախեցաւ յայտնելու, բայց նրա գէմքից շատ լաւ նշմարւում էր, որ նա էլ նոյն կարծիքին է:

— Դու ի՞նչու ես լոել, թովմաս, հարցրին նրան ընկերները, ի՞նչ ես կարծում, այս փողերը, որ մենք ստացանք, մեր աշխատանքին բաւարար է:

Թովմասը վախկոտ կերպով նայեց այս ու այն կողմ,
ապա ատամների արանքից ասաց.

— Այո, իսկապէս որ շատ քիչ է, Աննան աւելի կա-
րող էր տալ:

— Եհ, ծեր մարդ, ինքու այդ լաւ զիտես և լուսմ ես:

Ի՞նչպէս կարող է այդ բանը Աննան չը հասկանալ,
առաջին անգամ չէ, որ նա այս գործարանումն է զտնւում:

Աննայի մօտենալով ամենքը լոեցին:

Բանւորները հաւաքւեցին գետաբերանը:

«Գործ դեռ շատ կայ, ի՞նչ անել ուրեմն» մտածում
էր Աննան ինքն իրեն: Փոթորիկը, ինչպէս վերել յիշեցինք,
կոտրատել, արմատախիլ էր արել բաւականին ծառեր, որոնք
թափւելով ճանապարհների վրայ, ապրանքատար սայլերի
համար անամցանելի էին դարձրել:

Սաստիկ անձրեի ջրից և գետի յորդ հոսանքից լւաց-
ւել տարւել էին երկաթուղու զծի տակի հողերը, փայ-
տերը: Վարչութիւնը բաղմաթիւ բանւորներ էր աշխատա-
ցնել տալիս, որպէսզի ինչքան կարելի շուտ կարգի բեր-
ւի ճանապարհ:

Գործարանատիրոջ տունը, շնորհիւ խիտ եղնեայ
ծառերով շրջապատւած լինելուն, անգտանդ էր մնացել:

Փոթորիկը, տիկին Մինայի վրայ շատ վատ էր ազ-
գել. նա կիսահիւանդ պառկել էր մահճակալի վրայ և մտա-
ծում էր, որ այս պատիժը Աստւած է ուղարկել իրեն՝
Թովմասին բանւոր ընդունելու համար հակառակւելուն:

Ամբողջ օրւայ գործից սաստիկ յոգնած, Աննան ե-
րեկոյեան վճռեց գնալ տուն և հանգստանալ. նախ քան
տուն գնալը՝ նա հանդիպեց կայարանին, որտեղ մնացել
էին դեռ ևս չը ճանապարհւած ապրանքները:

Աննան այդ մասին երկաթուղու կառավարչի հետ
խօսեց.

— Վաղը, կամ թէ միւս օրը ձեր բոլոր ապրանքները
ճանապարհւած կը լինեն, հանգստացրեց կառավարիչը
Աննային, հէնց որ գիծը կարգի կը բերւի՝ ապրանքները
կսկսենք տեղափոխել:

Գեղեցիկ երեկոյ էր. երկինքը փայլում էր և չէր
նշմարւում ոչ. մի ամպի կտոր, կարծէք այդ օրը ոչինչ
չէր պատահել:

«Շուտով իմ քսաննեեօթ տարին կը լրանայ» մտա-
ծում էր Աննան ճանապարհին, «իսկ ես»:

Այդ միտքը նրան շատ հեռու տարաւ, գէպի Հելսինգ-
ֆոլմի սւանողական կեանքը, որտեղ նա շարունակ երա-
գում էր ապագայի վառ և զեղեցիկ յոյսերը...:

«Միթէ բոլորը չքացել, անցել են. ես իմ ամբողջ
կեանքը միթէ պէտք է նվիրեմ զործարանի միատեսակ
աշխատանքին»:

Աննան դժոն կերպով ախ քաշեց, աշխատելով ինքն
իրեն մէջ այդ հարցերի պատասխանը գտնել:

Նա իսկոյն անցաւ երկաթուղու գծից:

Երջակայքը լուսութեան էր մատնւած. չէր լսում եր-
կաթուղու մեքենայի միապաղաղ շոյցը. լուսում էր միայն
գետակի միատեսակ կարկաչիւնը և ի՞նչ որ հեռում էլ
լուսում էր շնագայլի անտիորժ կաղկանձիւնը: Զէր շար-
ժում ծառերի ոչ մի տերեւ: Ամբողջ անտարը քնած էր
դիւթական քնով:

Աննան այգտեղից ուղիղ անցաւ իրենց գործարանը,
որի հրապարակում հաւաքւած էին մի քանի բանւորներ,
որոնց մէջ էր նոյնպէս նոր ընդունւած բանւոր Ադամը.
Նրանք ցրեցին՝ երբ Աննային տեսան, բայց կրկին հա-
ւաքւեցին՝ և սկսեցին խօսիլ երբ նա հեռացաւ:

Աննան յետ նայելով՝ տեսաւ որ Ադամը աչքերով ի-
րեն հետեւում է.

«Զարմանալին է, ի՞նչ բանի համար է, որ նրանք այդպէս տաք-տաք վիճում են միմեանց հետ, բացի դաշնից, ժամի 11-ին է արդէն. չէ որ այս ժամանակ բոլոր բանւորները քնած են լինում» մտածում էր Աննան:

Բայց առանց դրան էլ նա շատ մտածելիք ունէր. նէնց այդ պատճառով էլ մտահան արեց բանւորական այդ խմբակի հաւաքումը: Մտաւ իւր սենեակը, պատուհանը բաց անելով նստեց նրա առաջ, աչքերը յառելով դէպի հեռուն, խորասուգւած մտածմունքներով. նա այդտեղից էլ տեսաւ, որ զեռ նոյն բանւորների խմբակը չէր հեռացել հանգստանալու. երբեմն նրանց սուր ձայնը դիպչում էր իր ականջին:

Նա այդ գրութեան մէջ շատ նստած մնաց: Արդէն արեգակի ճառագայթները տարածւել էին պարզ երկնքի վրայ և շուտով պէտքէ ոսկեզօծէր նրանցով բարձր ծառերի գագաթները:

— Առաւօտ է..., ասաց Աննան, վեր կենալով և առանց հանւելու՝ մտաւ անկողին:

Լուեց անտառի ծառերի վրայից թռչունների քաղցր մեղեղին: Գործարանում աշխատանքը արդէն ոսկւել էր:

— Յարգելի օրիորդ, եկել եմ ձեզնից մի բան խնդրելու, ասաց հարևան գործարանատէր Նիկողայոսը, ներս մտնելով միւս օրը գրասենեակ:

— Ամենայն ուրախութեամբ պատրաստ եմ կատարելու ձեր ինդիրը, բայց այդ ի՞նչ գործ է, ասաց Աննան:

— Այս փոթորկի ժամանակ մեր գործարանի էլեքտրօմեքենան փչացել է, աշխատեցի ինքս ուղղել նրան, բայց չը յաջողւեց. մեր մեքենավարն էլ հիւանդ պառկած է, կը ինդիրէի ձեզնից կարգադրելու ձեր մեքենավարին, որ պէսզի գար և ուղղէր:

— Շն, դժբախտաբար Զեր խնդիրը կատարել չեմ

կարող, քանի որ մեր մեքենավարն էլ երէկ փոթորկի ժամանակ վիրաւորւեց, այժմ հիւանդանոցում պառկած է:

— Այդ ես լսել եմ, բայց գուք մի ուրիշ մեքենավար էլ ունիք:

Աննան զարմացմամբ նայեց նրան:

— Դուք, ինչպէս երկում է, անիւ պտոյտ տէսդին էք ասում, բայց ձեզ հաւատացնում եմ, որ նա ոչ մի հասկացողութիւն չունի մեքենաների վերաբերմամբ:

— Ես ձեզ հաւատացնում եմ, որ գուք մի հմուտ մեքենավար ունիք. նէնց այժմ ձեր բանւորները ինձ ասացին, որ նա կարող է ամբողջ մեքենան քանդելու նորից շինել:

— Այդ նրանք հնարել են, այստեղ այնպիսի մէկը չըկայ:

— Նրանք նրա անունն էլ ասացին, կարծեմ Աղամ է:

— Աղամ, այ քեզ տարօրինակ բան, նա մի հասարակ քանւոր է, որին այս վերջերս եմ ընդունել թովմասի հետ միասին. կասկածում եմ, որ նա մեքենաների վերաբերմամբ մի բան իմանայ:

— Կարգադրեցէք, յարգելի հարևանունի, ես հէնց այժմ այդ բոլորը կիմանամ:

— Մէծ ուրախութեամբ, համաձայնելով Աննան, գնաց հեռախոսի սենեակը, որտեղից կարգադրեց գործակատար Յովհաննէսին՝ Աղամին ազատ թողնել աշխատանքից:

— Անչափ շնորհակալ եմ, յարգելի Աննա, ասաց Նիկողայոսը՝ գուըս գալով գրասենեակից:

Քիչ յետոյ Աղամը և գործարանատէրը գնում էին գէպի գործարան: Աննան անչափ զարմանում էր. «Ի՞նչն է սարիպել նրան՝ գալ և հասարակ բանւոր գառնալ, քանի որ նա գիտէ լաւ մեքենավարութիւն, նոյն իսկ շինելը.

կարծում եմ բանւորների մէջ ինքն իրեն գոված լինելու համար է նա այդ բանը ասել, իսկ նրանք էլ հաւատացել են»:

Աննան շուտով համոզւեց, որ իւր կարծիքները սխալ են. մի ժամից յետոյ նկատելի եղաւ հարեանի էլեքտրական լոյսի արտացոլումը. ցերեկով լոյսը այնքան լաւ չէր երեւմ, բայց կարելի էր նկատել՝ երբ արտացոլումը մութ իրերի վրայ էր ընկնում:

Աննայի հետաքրքրութիւնը կրկնապատկւեց. նա հեռախօսով հարցուեց հարեան գործարանատիրոջից.

— Ի՞նչպէս է գնում գործը, Ադամը կարողացաւ ուղղել ձեր մեքենան:

— Ա՞նչափ յաջող, լսւեց Նիկողայոսի ձայնը. նա շատ հմուտ կերպով ուղղեց իւմ մեքենան. ես նրան առաջարկեցի մնալ ինձ մօտ՝ մեքենավարի պաշտօնով, բայց նա մերժեց, գերադաս համարելով ձեզ մօտ մնալը:

— Տարօրինակ կամք, զարմացումով ասաց Աննան, հեռախօսի կոճակը կախելով մեխից. մերժել աւելի շահաւետ պաշտօնը և գալ հասարակ բանւոր դառնալ՝ ես այդ բանից ոչինչ չեմ հասկանում: Մի փոքր մտածելուց յետոյ նա կը կին մօտեցաւ հեռախօսին և կանչեց գործակատար Յովհաննէսին:

— Իմացէք, երբ կը վերադառնայ հիւանդանոցից մեքենավար Յակովը:

— Վաղը, պատասխանում է Յովհաննէսը. Յակովին քննել են, որ նրա ոչ մի տեղը չի վկասւել, այլ թեթև կերպով ճանկուած է, այժմ արդէն լաւ է:

— «Ավանս, որ չեմ կարողանում հասկանալ այդ պատահական մեքենավարի մի մտածողութիւնը, գաղափարը, իդէալը», ասաց ինքն իրեն Աննան, «ինձ անչափ հետաքրքրում է այս բոլորը»:

Նա աշխատեց ինքն իրեն պարզել, թէ դա ինչ հանելուկ է, բայց ոչ մի վերջաւորութեան չը կարողացաւ յանգիլ:

Աննան դժողով, ձեռքերը այս ու այն կողմը շարժեց, սկսեց բարձր ձայնով խօսիլ.

— Ի՞նչ հարկաւոր է ամեն մի չնչին բանի համար այսքան երկար մտածել. առանց այն էլ քիչ գործ չունիմ: Իւր կամքին հակառակ՝ նա էլի սկսեց այդ բանի վրայ մտածել, որից առաջացաւ բարկութիւն, ջղայնութիւն, որին առաջի անգամ ենթարկւեցին իւր երեք գործակատարուհիները: Ամենից աւելի իւր բարկութիւնը փորձեց թափել Սօնայի վրայ, որին առաջներն էլ նկատողութիւններ անում էր գործի վերաբերեալ, քանի որ նոր էր մտել գործի մէջ և այնքան էլ ծանօթ չէր գործին:

— Ես բոլորովին զարմանում եմ, Սօնա, թէ ձեզ հետինչ է պատահել, նկատեց Աննան, անբաւարար կերպով. գուք նոյնիսկ չէք հասկանում այն բանը՝ ինչ որ ես ձեզ ասում եմ:

Սօնան երկչուտ աչքերով նայում էր Աննային կարծէք էլի նկատողութիւնների էր սպասում:

— Հեղինէ, գուք կը կին բաց էք թողել հաշւի տեսրակներից վերջին ճանապարհած ապրանքները:

Հեղինէն հանգարտութեամբ գլուխը բարձրացրեց և հանգիստ կերպով ասաց.

— Ցարքելի Աննա, ես այդ չը վճռեցի կատարելուր քանի որ ապրանքը ճանապարհած չէ և գտնելում է կայարանում:

Աննան այսօր պատճառաբանութիւններ լսել չէր կարողանում:

— Դրանից ինչ դուրս եկաւ, չէ՞ որ ապրանքը այլևս գործարանում չէ, նշանակում էր որ նա պատրաստի ապ-

քանք չէ կաբող լինել, ուրեմն պէտք է անցնի ճանապարհածների տետրակը:

Հեղինէն նրա կարգադրութիւնը լսելով՝ իսկոյն կատարեց:

Քիշքիչ Աննայի բարկութիւնը անցաւ, նրա խիղճը սկսեց տանջել. նա նրանց հետ մինչև այդ օրը այդպէս չէր վարւել:

Նա կամեցաւ գործակատարուհիների սիրալ շահել, առանց այն էլ խիղճը սաստիկ տանջում էր նրան, ճաշի գնալիս նա նրանց ասաց.

Այսօր կէսօրից յետոյ մենք այլու չենք աշխատիլ, քանի որ գործարանում գործը առաջւայ նման լաւ չէ ընթանում, կարող ենք մեր կիսատ մնացած գործը վաղն էլ կատարել. իսկ այսօր կը գնանք անտառ՝ զբունելու, պտուղներ և սունկ հաւաքելու:

Աննայի անսպասելի փոփոխութիւնը և նրա փաղաքշական խօսքերը մի տեսակ զարմացրեց նրանց. նրանք շատ ուրախ էին պատհական հանգստից. Փիննական օրիորդները շաբաթւայ մէջ միայն կիւրակիներն էին հանգստանում, իսկ միւս օրերը միշտ աշխատում էին:

Մայրիկ, ես այսօր հանգստութիւն չնորհեցի իմ գործակատարուհիներիս, ասաց Աննան ճաշի ժամանակ. մենք միասին կը գնանք անտառ զբունելու և պտուղներ հաւաքելու:

Այն ժամանակ լաւ կանես, եթէ երեխաներին էլ հետդ վեր առնես:

Ուրախացած երեխաները սկսեցին թոշկոտալ այս ու այն կողմ:

Ի՞նձ էլ տար, ինձ էլ, աղաղակեցին Յովհաննէսը և Մատթէոսը:

Արեգակը արդէն մայր էր մտել, երբ նրանք անտա-

սից տուն վերադարձան. իւրաքանչիւրի ձեռքում կար փոքրիկ կողովներ լիքը կարմիր, որպէս արիւն՝ ելակներով, Մայրը երեխաներին դիմաւորեց բակում, կատակի ուրախ եղանակով նրանց ասելով.

— Լաւ զբօնեցիք, իսկ առանց ձեզ հայրիկը արդէն վերադարձաւ:

— Ո՞ւր է հայրիկը, ո՞րտեղ է, թոշկոտելով աղաղակեցին երեխաները:

— Ճանապարհին սաստիկ յոգնած լինելով, ճաշեց, իսկ այժմ հանգստանում է ննջարանում:

Աննան իւր հօր սովորութիւնը զիտէր. ճանապարհից վերադառնալուն՝ նա հանգստանում էր, որպէսզի միւս օրը դեռ լոյսը չը ծագած՝ գործարանում լինի:

— Այդ գէպքում ինձ էլ է հարկաւոր հանգստանալ, ասաց Աննան, քանի որ ես էլ պէտք է շուտ վեր կենամ և գործին վերաբերեալ բաների համար խօսեմ և ցոյց տամ:

Նա իրեն շատ թոյլ էր զգում, անցեալ գիշեր միայն երկու ժամ էր քնել, իսկ այդ օրը ամբողջ ժամանակ զբունել էր, որը և մի տեսակ թուլացրել էր նրան. յոգնած աշքերը շատ դժւարութեամբ էին բացւում: Պատուհանից նա կրկին տեսաւ գործարանի հրապարակում հաւաքած բանւորներին, որոնք այս անգամ երեկւանից աւելի շատ էին. նրանք լուսութեամբ լսում էին իրենց ընկերներից մէկի խօսելուն. Աննան հեռւից կարողացաւ ճանաչել այդ խօսեցողին՝ Աղամի էր, որ ծածկած ունէր կաշւէ գլխարկ:

Աննան հետաքրքրութիւնից քունը մոռացաւ. նա աշխատում էր հասկանալ, թէ ինչու են բանւորները այս երկու օրը հաւաքւում և այդպէս տաք-տաք միմեանց հետ վիճում:

Պատուհանի մօտ նստելով, իւր ամբողջ լողութիւնը

լարեց դէպի այդ ամբոխը. ոչինչ չը կարողացաւ լսել, միայն տեսաւ, որ Աղամը ինչ որ բանի մասին էր խօսում, երբեմն էլ աջ ձեռքով դէպի գործարանատիրոջ տունն էր ցոյց տալիս:

Բանւորները լսում էին նրան լուսթեամբ և ուշադրութեամբ:

Երբ նա խօսեց վերջացրեց, մի ուրիշ երիտասարդ բարձրացաւ վանդակապատի վրայ և սկսեց այնտեղից խօսել:

Աննան սկսեց լսել. նրան թւում էր, որ լսում է ինչ որ բարակ և ջղային ձայն:

Այս Պետրոսն է, ասաց Աննան, ճանաչելով խօսեցողին. զարմանալին է, ինչ բանի համար է նա խօսում, ես մինչև այժմ ոչ մի խօսք չեմ լսել նրանից, իսկ այժմ ճառախօսում է, այ քեզ տարօրինակ բան:

Մի բոպէով Աննան կասկածով կաշկանդւեց, բայց յետոյ նա այդ կասկածը անհիմն համարեց, քանի որ նրանց խօսելուց նա ոչ մի բան չէր կարողացել լսել. Էն, կարելի է մի ուրիշ բանի համար են խօսում. Յոզիածութիւնը բոլորովին Աննային տիրապետեց, նա երկար նստել չը կարողացաւ և վեր կացաւ պառկեց քնելու:

Աննան շատ վաղ արթնացաւ, նա նայեց ժամացոյցին. «չարսն է»: Երէկւայ յոզնածութեան յետքն անզամ չէր երեսում նրա վրայ. գիշերը լաւ քնել էր, տույզացել. արագութեամբ սկսեց հագնելու, սառու ջրով լւացւեց և շտապեց դէպի գործարան:

Գործարանատէրը արգէն այնտեղ էր, նա հետաքրքրութեամբ նայում էր փոթորկից առաջ եկած վնասներին, փլւածներին և իւր մէջ հաշւում, թէ ինչքան վնաս է եղել. նրան հետեւում էր գործարանատէրը Յովիաննէսը:

— Ահա և Աննան, ապրիս, շուտ ես վեր կացել, բա-

ւականութեամբ առաց իրօլիանինը՝ համբուրելով աղջկան. Յովիաննէսի հետ միասին քննում ենք, թէ ինչքան վնաս է տւել մեզ փոթորկիր:

— Այս, հայրիկ, շատ վնաս տւեց:

Այդպէս մի խօսիր, իմ սպասածից շատ վնաս չէ եղել. գիտես, այստեղ, որտեղ ես էի գանուում, փոթորկիլը բոլոր ծառերը արմատախիլ է արել, որը ինձ համար անչափ ձեռնտու է. էլ կարեք չկայ կրկին կարել տալու, կատակով ասաց գործարանատէրը. Աղջիկը ժպտաց:

Փոթորկից մի ուրիշ օգուտ, գետի ջուրը այնքան շատացել է, որ այստեղից այստեղ փայտեր տեղափոխելու համար հարկաւոր է լինել գետի մէջ և նրանք հոսանքով այստեղ կը բերւեն: Մոռացայ ճիշտ, քեզնից շնորհակալ լինելու, որ դու այնքան հմտութեամբ կարգի ես բերել և նորոգել գործարանը՝ փոթորկից անմիջապէս յետոյ: Դու այն էս արել՝ ինչ որ ես կանէի. լաւ օգնուկան կը լինես: Եւ հայրը ամուր ձեռքով սեղմեց աղջկայ ձեռքը, որով կարծէք արտայատում լինէր իւր այնքան հաւատը դէպի իւր աղջիկը, որը այդպէս հմտու կերպով օգնում էր իւր հօրը:

Կարծում եմ աշխատելու ժամանուկ է, ժամը 5-ն է, զանդանարիք, ասաց գործարանատէրը՝ շուտ գալով դէպի Յովիաննէսը:

Զանդը աշխատանքի էր հրաւիրում, պղնձէ մետաղը արթնացնում էր բանւորներին, փափցնելով քաղցր երազները և ցոյց տալով իրական կեանքը:

Շուտով երկեցաւ բանւորների շարան-շարան զուբս գալը, որոնք կարծէք մեքենայի նման սովորել էին այդ զանդի ձայնից վեր թռչել և տպա գործել, անվերջ աշխատանք. նրանք գործի էին դիմում:



— Բարի օր, կրկնում էին բանւորները՝ գործարանատիրոջ առաջից անց կենալիս:

Հմուտ ականջ էր հարկաւոր՝ լսելու և հասկանալու, թէ ինչպէս էին արտայայտում բանւորները այդ խօսքերը:

Մի քանիսի ձայնից իմացւում էր, որ նրանք պէտք է այդ խօսքը ասէին, ուրիշները ասում էին ինչպէս սովորութիւն է, մի մասն էլ ասում էր ծածուկ ոխ պահածի նման:

Եղանակը շատ պարզ և օդր գուրեկան էր:

Անիւները ջրի մէջ թողեցէք, կարգադրեց իրօլիանինը:

Մի քանի բովէից ամեն ինչ արդէն կարգի էր բերւած: Լսեց անիւների և մեքենաների շարժումը:

Գործարանատէրը մտաւ գործարանի բոլոր մասերը, նայեց ուշադրութեամբ բոլոր բանւորներին, երբ բանւորների մէջ նկատեց Թովմասի կարմիր և սպառած գէմքը, իսկոյն շուռ եկաւ՝ դուրս գալով գործարանից:

Գնանք գրասենեակ, գիմեց նա իւր աղջկան, այստեղ ամեն ինչ կարգին է:

Գրասենեակում դեռ ես ոչ ոք չըկար:

Գործակատարունիները ժամը 8-ին էին գալիս գրասենեակ:

Իրօլիանիս լաւ տրամադրութիւնը վատի փոխեց. նա իւր աղջկան անդամ չը նայեց, այլ վեր տուտ բանւորների մուտքի տեսրակը և սկսեց թերթել, հաստատ համոզւելու համար, թէ իսկապէս Թովմասը կրկին ընդունւած է իւր գործարանի մէջ:

Այլեւ կապկածելու ոչինչ չը մնաց, նա կարգաց տեսրակում գրւած իրեն ոչ հաճելի Թովմասի անունը:

— Աննա, գու ինչու ես կրկին նրան մեր գործարանում ընդունել, ասաց գործարանատէրը՝ յօնքերը կիտած

և բարկութիւնից ատամները սեղմած: Հօր այդ սարսափելի դէմքը աղջիկը տեսաւ:

— Նա ուտելու ոչինչ չունէր, հայրիկ, ես իրաւունք չունէի նրան չընդունել, ասաց Աննան սառը կերպով:

— Այն ժամանակ կարող էիր նրան մի քանի մարկ տալ, նա կը գնար կը հեռանար. և պատասխանի չը սպասելով՝ շարունակեց. ոս ինչ նոր անուն է, Աղամ Խիրինօվ:

Աղջիկը կարմրելով, առժամանակ իւր հօրը պատասխանել չը կարսղացաւ. նա նոյն իսկ յիշեց իւր տեսած այդ երկու օրւայ ատենաբանութիւնները, բայց աւելի յարմար համարեց այդ մասին ոչինչ չը խօսել:

— Դա հմուտ մեքենավար է, աւելի յարմար գործ չը դանելով՝ նա եկել և հասարակ բանւոր է դարձել:

— Նա մեքենավար է, դա շատ ուրախալի է. նկատելի եղաւ գործարանատիրոջ դէմքի փոփոխութիւնը. ես կամմենում եմ մեր շոգեմեքենաները փորձել, նա ամեն ինչ կարող է կարգի բերել. ուրեմն թէ աժան կարող եմ պլրծնել և թէ շահ ունենալ. և սկսեց գործարանատէրը մեղմ քրքչալ:

Գործարանատէրը առաւտեան գործարանից դուրս գալիս, Թովմասը իւր ընկերոջ ասաց.

— Էհ, այդ տաղջւայ հասարակ մանրավաճառը ինչպէս ուրիշների աշխատանքով զիրացաւ:

— Դու նրան վաղուց ես ճանաչում: Թովմասը ժամանակում:

— Ես նրան շատ փոքր հասակից եմ ճանաչում, նրա պատմութիւնն էլ քեզ պատմելը կարծում եմ աւելորդ է..., Էհ, աշխարհ:

Հեռաւից երեաց գործակատար Յովհաննէուը:

— Սըսս, լոիր, այս անպիտանը ինչ որ լսում է՝ ա-

մեն ինչ շուտով գործարանատակրոջն է հաղորդում:

Բոլոր բանւորները սկսեցին ջանասիրութեամբ աշխատել՝ նրան հեռից նկատելիս:

— Ի՞րադեղ է Աղամը, հարցրեց գործակատարը:

— Կերեսում պէտք է լինի, բայց նրան ինչ էք անում:

— Գործարանատէրը նրան կամենում է տեսնել:

Թովմասի գէմքը կնճուեցաւ, ևս ձեռքից բաց թողեց բանը և սկսեց ինքն իրեն մտածել.

«Ի՞նչ պէտք ունի գործարանատէրը Աղամին տեսնելու. չը լինի այդ ծերը ամեն ինչ հասկացել է. բայց ոչ, ոչ, հազար անգամ ոչ, դա անհիմն կարծիք է, նա Աղամին չէ ճանաչում և ոչ մի տեղ էլ նրան չէ տեսել»:

Թէև թովմասը կրկն սկսեց աշխատել, բայց կասկածները Աղամի վերաբերմամբ՝ նրան մի տեսակ կաշկանդել էին:

— Դու ինձ ինչու խարեցիր, Աղամը վերեսում չէ, առաց Յովհաննէսը աստիճաններից ցած իջնելիս, խոժառ գէմք ցոյց տալով թովմասին:

— Նշանակում է մի ուրիշ տեղ կը լինի, ես ինչ կարող եմ իմանալ նրա որտեղ լինելը, առաց թովմասը ուշրախ, որ նա չէ կարողացել Աղամին գտնել:

Յովհաննէսը վերաբառնում էր զբասենեակ, երբ նա յիշեց, որ երէկ հէնց ինքն է կարգագրել Աղամին զնալու հարեան գործարանատակրոջ մեքենան ուղղելու. նա շուռ եկաւ գէպի այն կողմ զնալու, երբ լսեց գործարանատիւրոջ բամբ ձայնը.

— Հը՛, ինչ եղաւ, բերիր:

Յովհաննէսը ամեն ինչ առաց.

— Է՞հ, չ'արծէ, մի զնա, քանի որ գործարանատէրը ինդրել է. Մենք յետոյ էլ կարող ենք մեր գործը կարգի դնել:

Յովհաննէսը լոռութեամբ հետեւեց իւր տիրոջ: Տանջւած, լքւած, քիչ խօսող փինսնական բանւորները կարծէք այսօր կենդանութիւն էին ստացել: Նրանք ինչ որ բանի վրայ միմեանց նետ խօսում էին, վիճարանում. աւելի աչքի էին ընկնում երիտասարդ բանւորները՝ իրենց տաք խօսալցութեամբ, իսկ ծեր բանւորները երբեմն միմեանց փոխանակում էին խօսքեր, աւելի յարմար իմաւնալով ուրիշներին լսելը:

Աղամը իրաւունք ունի բոլոր գործարանատէրերին խոզեր անւանելու, ասաց կարապետը. Էջ նկատում էք, եղբայրներ, թէ առաջ ինչպէս քաղցր էր վարում մեզ հետ գործարանատէրը, միշտ բարեսում, զիխարկը հանում, իսկ այժմ, մենք նրան խոնարհ բարեսում ենք, իսկ նա գլխով անգամ չէ կամենում մի թեթև շարժում գործել, մեր բարեկին պատասխանել:

— Ի՞նչպէս խոզը կշացել է... աւելացրեց իւր կողմից թովմասը:

— Փողը շատացել է, ուրեմն ամեն ինչ կարող է անել, ասաց մի նոր ընդունւած երիտասարդ բանւոր:

— Նա այդ հարստութիւնը, այդ փողը մեր ձեռքերի աշխատանքով է կարողացել զիզել, ասաց կարապետը:

— Զայնդ կարիք, յիմար տղայ, գեռ բերնիցը կաթի հոտ է զալիս. քեզ է մնացել իրօլիանինի փողի մասին զատողութիւն տալ, կծու կերպով ասաց հին և ծեր բանւոր Յակոբը:

— Աւելի լաւ կը լինի, որ ձեզ պէս բանւորները լոեն, ինչպէս որ ձեզ նմանները միշտ ծանրաբեռնուած են մեզ-պէսների զին, այնպէս էլ քո Միքայէլը մեր մէջքին նստել և մեր աշխատածները հանգիստ կերպով վայելում է, զայրացած տասց կարապետը: Կաթնակեր, զատարկ-գատարկ դուրս ես տալիս,

իսկ ինքու ոչինչ չես հասկանում, հէնց առաջներում մեր այժմեան գործարանատէր Միքայէլը մեզ պէս աշխատում էր Գիւմաննիա գործարանում, իսկ յետոյ...

— Ի՞նչ յետոյ, մենք բոլորս զիտենք, որ այդ գործարանատէրոջ փողը իւրացնելով՝ իւր գործարանը բաց արեց, ասացին այս ու այն կողմից բանւորները, չը թողնելով որ Յակոբը իւր խօսքը վերջացնէ. այդ բանը փոքր երեխաներն անգամ զիտեն:

— Առաջինը այդ բանը ես կը հաստատեմ, լուեց Թովմասի խուլ ձայնը:

— Օ՛հ, ինչ լաւ երեխայ գտնւեց, նա արդէն 60 տարեկան է, բայց գեռ իրեն երեխայ է հաշւում, լուեց մի ինչ որ բանւորի հեգնական ձայնը:

Բոլոր բանւորները սկսեցին ծիծաղել:

Թովմասը այդ կատակից վիրաւորւած՝ սկսեց իւր ձեռքի բահը այս ու այն կողմ շուռ տալ:

Եւ իսկապէս երեխաներ, ինչ էք քրքջում, մենք գործի վրայ ենք խօսում, իսկ սրանք ծիծաղում են, ողորմելիներ, գոռաց նրանց վրայ Յարութիւնը:

Երիտասարդ բանւորները ծիծաղի անտեղի լինելը նկատելով՝ լսեցին: Մի քանի բոլոք բոլորն էլ լուռ աշխատում էին:

— Ահա գործը որտեղ է, խզեց առաջին անգամ լուսւթիւնը կարապետը, չը կարողանալով իւր գժղոնութիւնը արտայայել գործարանատիրոջ դէմ:

— Գիտէք, տղայք, նկատեց Յակոբը, ինչ հարկաւոր են այս բոլոր գատարկ խօսքերը. գործարանատիրոջ ուշնեցած փողը մեզ պէտք չէ, մենք կամենում ենք որ մեր աշխատանքի համեմատ մեզ վարձատեն, այսինքն ոչ այնպէս՝ ինչպէս այժմ. էլ ուրիշ ոչինչ:

— Ահա նա ուղիղ ասաց, համաձայնւեցին բանւոր-

ներից շատերը. ի՞նչ հարկաւոր է պատարկ խօսել և իզուրտեղը ժամանակ կորցնել:

— Մեզ այժմ հարկաւոր է այդ բանը վճռել. և երբ վճռեցինք, այն ժամանակ կարող ենք գործարանատիրոջ հետ այդ մասին խօսել:

— Իսկ եթէ նա չը բարեհաձէ մեզ հետ խօսել, կատակի ձեռվ ասաց Կարապետը:

— Ի՞նչո՞ւ համար նա չը պէտք է խօսի մեզ հետ. իւրաքանչիւր գործատէր պարտաւոր է լսել իւր բանւորներին՝ թէ ի՞նչ է պէտք նրանց, կամ թէ ի՞նչ է պակասում նրանց:

— Մենք նրան այն ժամանակ կարող ենք ասել, որ ձեր վճարած բանւորավարձը շատ քիչ է և մեզ չէ բաւականացնում, կը խնդրէինք աւելացնել...

— Իսկ նա, առաջւայ նման, մեզ մօտ կուղարկէ իւր աղջկան և որը տեարակները մեր առաջ դնելով՝ կը բացատրէ, թէ ոչ մի կոպէկ աշխատավարձը չէ կարելի աւելացնել, աշխատավարձի չնչին յաւելումով սահպւած կը լինէինք գործարանը փակելու. այս առաջին անգամ չէ, նրանք մեզ հետ մի քանի անգամ այդպէս են վարւել, ասաց Յակոբը:

— Իսկ մենք նրանց հաւատում էինք և քիչ էր մնում լաց լինէինք, որ այդքան բարեխիղճ և մաքուր գործարանատէր չէ կարող լինել, նա ամեն ինչ մեզ փաստերով ցոյց է տալիս, նորից խօսքի մէջ խառնւեց կարապետը:

— Այդ գէպքում ուրեմն ի՞նչ անել, ի՞նչպէս վարւել նրանց հետ՝ հարցրեց Յակոբը բանւորներից:

Բանւորները սկսեցին ծիծաղել:

— Այդ բանը դու առաջարկեցիր, պարտաւոր ես ի՞նք էլ վճռել, ասաց հանգիստ կերպով Յարութիւնը:

— Թոյլ տւեք ձեզնից հարցնելու, ասաց կարապետը

դիմելով Յակոբին, ինչպէս տեսնում եմ, այժմ ձեր ընտանիքը լաւ վիճակի մէջ է, փող շատ ես ուզարկում քո կնոջը, հաւանական է այժմ ձեր երեխաները շատ կուշտ և մաքուր հագնւած լինին, դու մինչև անգամ ինքոք քեզ չես կարողանում լաւ կերակրել և հագնւել՝ էլ ինչու ես մեր խօսած ժամանակ ընդմիջում և մեզ կաթնակերներ անւանում. դոնէ եթէ դուք, այսինքն ձեզ պէսները չէք կարողանում մի զործ տռաջ տանել, ինչու էք խանգարում այդ բանը ուրիշներին անելիս:

Բոլոր բանւորները, բացի ծերերից, թողել էին իրենց գործը և հաւաքւել կարապետի շուրջը:

Ծեր բանւորները աշխատում էին առանձին խմբակ կազմելով և աշքի տակով երբեմն նայում վիճարանսղներին:

Երկար տարիների բանւորութիւնը միշտ միենոյն գործով, միշտ միենոյն տեղում, միացըել, կապել էր նրանց գործի հետ. նրանք բաւականանում էին այնքան տշխաւավարձով, ինչքան կը տային նրանց:

Նրանք շատ լաւ հասկանում էին, որ այդ հասակում չեն կարող դնալ մի ուրիշից գործ խնդրել, պարզ է, մերժում կը ստանային, ուրեմն նրանց համար այդտեղ աւելի լաւ հանգիստ և ապահով էր. Վաղուց էր մեռել նրանց մէջ գործարանատիրոջը ստրուկ չլինելու զգացմունքը. նրանք ամենայն ճշտութեամբ և հնագանդութեամբ կատարում էին նրա կամքը և կարգադրութիւնները:

— Փառք Աստուծոյ, մենք կուշտ ենք, հագուստ էլ հօ ունինք, էլ ինչ կարիք կայ ուրիշ բաներ պահանջելու. ինչ վերաբերում է մեր երեխաներին՝ նրանք իրենք պէտք է աշխատեն և ապրեն, մենք պարտաւոր չենք շարունակ նրանց կերակրելու և հագնելու:

Նրանք այդպէս մտածելու իրաւունք ունէին, քանի որ երիտասարդ բանւորների պահանջները չը պիտին,

չէին հասկանում և եթէ մէկն ու մէկը յանձն առնէր նրանց հասկացնելու իրենց այդ անելանելի գրութիւնը, հաւանական է՝ նրանք յետ չէին միւս բանւորներից: Զգուշացէք, աղայք, գործարանատէրը՝ գործակատարի հետ միասին այս կողմնէ գալիս, զգուշացրեց բանւորներից մէկը, Հաւաքւած բանւորները իսկոյն ցըւեցին իրենց տեղերը և սկսեցին աշխատել:

Աղամը աւելի պարզ կերպով կարող է արանց բացարել ամեն ինչ, ցած ձայնով ասաց Յարութիւնը կարապետին՝ որոնք միասին միմեանց մօտ էին աշխատում: Գիշերը կրկին հրապարակ հաւաքւելը անյարմար է, ծերը խորամանէ է, կարող է տեսնել և ամեն ինչ հասկանալ:

Վաղը չէ միւս օրը գիշերաւան կարող ենք հաւաքւել անտոտի մօտ գտնեած լճի ափին և խօսել, վճռեց կարապետը:

Այդ ժամանակ ներս մտան գործարանատէր Իրօլիանինը և գործակատար Յովիաննէսը:

Աղամի հասկացողութիւնը և հմտութիւնը շատ դուր եկաւ գործարանատիրոջ:

Վաղը տօն է, ասաց նա Աղամին, գործը շուտ կը վերջացնենք, երեկոյեան էլ չենք աշխատիլ. հանգիստ կը թողնենք շոգեմեքենաները, ասանց զբանց էլ ջրով պտոյտ եկող մեքենան բաւական կը լինի այսօրւայ համար, բայց ամենայն դէպս՝ դու նայիր կաթսային և շողեմեքենային: Այնպէս մի կարծիք, որ ես մարդկանց չեմ կարող գնահատել, ոչ, մի մարդ որ իսկապէս գործունեայ և հմուտ է գործին՝ ես շարունակ նրան կը գնահատեմ է կը վարձատրեմ...:

Հազիւ երեացող ժպիտը, իսկոյն աներենյթացաւ Աղամի երեսից, որ ոչինչ չը պատասխանելով, խոնտհելով հեռացաւ նրա մօտից: Աղամը հմտութեամբ գործ

ծարանի շողեմեքենան այնպէս էր կարգի բերել որ նոյն իսկ գործարանատէրն էլ զարմացած էր մնացել։ Տօնի պատճառաւ այդ երկու օրը մեքենան անդործ էին թողել։ բոլորը պատրաստւում էին գիմաւորելու այդ հազւադէպ տօնին։ Գործարանատէրը ամեն տարի սովորութիւն ունէր այդ տօնին բանւորներին հիւրասիրել մի բացօթեայ տեղում կերուխում անելու, հաստատ համոզւած լինելով, որ իրեն այդ մասնաւոր արած ծախսերով բոլոր բանւորների համակրութիւնը կը վայելէ։ Ֆինների համար ինչւանիւնն ամենայայտնի տօներից մէկն էր, որին անհամբերութեամբ սպասում էին հարուստն ու աղքատը, փոքրն ու մեծը։

Հիւսիսում ապրող բնակիչները ջերմ արեի երեսը երկար տեսնել չին կարողանում։ տարւայ մի քանի տամին էր միայն, որ արևը ցոյց էր տալիս իւր պայծառ դէմքը, որից սկսում էին ծաղկել բոլոր ծառերն ու ծաղիկները։ Շուտով անցնում էին այդ պարզ և ջերմ օրերը, հետեւում էր աշնանային մռայլ եղանակը, որի ժամանակ ձիւնն ու անձրել ամեն ինչ ծածկում էին։

Ահա թէ ինչու ֆինները այս տօնին այնքան անհամբերութեամբ են սպասում, երբ կարող են ազատ դաշտի մէջ արևի ջեռուցիչ լոյսին և ճառագայթների ներքոյ նստել ուրախանալ, լսել թռչունների քաղցը դայլայլիկները, ջութակի մեղմ ձայնը, խմել տեղական անուշ կալի գարեջուրը։

Տիկին Մինան, որ անչափ լաւ գիտէր այդ տեղական գարեջուր պատրաստելը, վաղուց էր եփել պատրաստել բացի գրանից գործարանատէրը մօտակայ գիւղաքաղաքից բերել էր տւել և իւր մառանում պատրաստի պահել։

Իւր ունեցած բազմաթիւ խոզերից մի քանիսը մորթել էր տւել, որոնց տիկին Մինան լաւ տապակել էր։

պատրաստել էր նոյնպէս մեղրից մի քանի տեսակ քաղցրաւենիք։ Մի խօսքով, բանւորներին հիւրասիրելու համար սրանից տւել պատրաստութիւն տեսնել չէր լինի։

— Յովհաննէս, զագահարիր, թող գան աշխատելու, կարգագրեց Միքայէլը. արդէն ժամանակն է, թող մի կէս ժամ էլ շատ լինի. իսկ խնջոյքը ժամի 9-ից կը սկսենք։
— Իսկ վաղը ժամը քանիսին էք կարգագրում բանւարներին գործի հրաւիրելու,

— Վաղը բոլորովին չենք աշխատիլ, պատախանեց Միքայէլը. թէ նրա համար շատ ծանր էր կորցնել մի բանւորական օր, բայց շատ լաւ գիտէր որ տօնի միւս օրը ոչ մի բանւոր չի երեայ գործարանում։

Անտափի մէջ, գործարանի աջ կողմում գտնւում էր մի փոքրիկ լիճ։ Ինց այդտեղ, ափի մօտ մեծ քարայտակի վրայ մի քանի տարիներ կատարւել էր այս տօնական խնջոյքը։

Վաղ առաւօտից այդտեղ արդէն աշխատում էր փոքրիկ երեխաների մի խմբակ, մաքրելով գետինը, ամեն կողմից ջրի հոսանքը կտրելով, քար ու խոտ լցնելով թաց տեղերը, որպէսզի խնջոյքի ժամանակ նրանք անյարմարութեան մէջ չը լինեն։

Միքայէլը նայում էր այս փոքրիկ աշխատող բանւորներին, գոհ մնալով նրանց աշխատանքից։ և նա նրանցից իւրաքանչիւրին ընծայեց հինգ կոպէկ, որոնց գումարը գործարանատիրոջ համար շատր պատկառելի թւաց։

Ժամի 5-ից արդէն բերւած էր ուտելիքը և գարեջրի տակառները։

— Ինչու ես գնում այնտեղ, վինթվինթաց թովմասը, չեմ տեսել ինչ է այդ ծեր սատանայի հիւրասիրութիւնը. առանց գրան էլ կարող եմ ապրել, նրա սատանայի դէմքը մի օր չը տեսնելու ինձ համար մեծ հաճոյք է։

— Քեզ ով է խանգարում, հօրեղբայր, նրան կարող ես բոլորովին չը տեսնել. հեռացիր գործարանից, այլև նրան բոլորովին չես տեսնիլ, կատակրվ ասաց վարդանիր:

— Դուքս եկ, հըմ, իսկ որտեղից ուտեմ ես և որտեղ գնամ:

— Եթէ դու այդ գիտես, էլ ինչու ես իզուր տեղը չարախոսում:

Երիտասարդ բանւորները խնջոյքի համար ընտրել էին ամենից յարմար տեղը: Հարեան գործարանից գալիս էին բանւորունի աղջիկներ:

Աննան, իւր երեք գործակատարունիների հետ արդէն եկել էր. թէկ նրան այնքան էլ հաճելի չէր ներկայ լինել այդ տօնական խնջոյքին, բայց որպէսզի բանւորները չը տաեն իրեն և գոռող չը համարեն, նա ստիպւած եկել էր:

— Նա պարել չէր սիրում, բայց այդ օրը ստիպւեց պարելու:

Երեացին միմեանց յետեից երկաթուղու և երկու հեռագրատան պաշտօնեաներ, որոնց հագուստի և զլիարկի ձեր տարբերում էր ներկայ եղողներից:

Գործարանատէրը հարեան գիւղից չորս նւտդածուներ էր հրաւիրել. իւր բանւորների մէջ էլ կային մի քանի հոգի՝ շփի վրայ նւազողներ:

Հաւաքւած ամբոխը անհամբերութեամբ սպասում էր խնջոյքի ոկտելուն:

Կատականէր և ուրախ վարդանը գործարանատիրոջ աջ կողմումն էր բազմել:

— Սկսել կարելի՞ է, հարցըց նա իրօլիանից:

— Իհարկէ, արդէն ժամանակն է:

Վարդանը շտապով, աննկատելի կերպով անցաւ ծառերի յետեր և մի քանի րոպէից յետոյ լուեց փոքրիկ թնդանօթի թնդիւնը: Ամբոխը ուրախութիւնից վեր թռաւ-

ուրախ ազմուկ բարձրացաւ, որին շուտով հետեւց նւազածուների նւագարանի մեղմ ձայնը: Արդէն խնջոյքը ոկտած կարելի էր համարել:

Վառւեցան ջաներ, կրակներ, որոնց լոյնը անդրադաւ կապոյտ լծի վրայ:

Մի առժամանակից, նւագածուները միանւագ ածելը թողեցին, լուեց միայն ջութակի ախորժելի ձայնը:

Կեր ու խումբ սկսւեց. հանդարտ խօսակցութիւնները ալկօնօլի ներգործութիւնից, բարձրացան աղաղակների: Դատարկ բաժակները և ափսէները արագաբար լրցւում էին: Սկսեցին պարի եղանակ նւագել. հրապարակում երեացին մի զոյգ պարողներ: Մէկը չեղինէն էր սպիտակ շրջագգեստ հագած, որը պարելիս փայլվում էր:

Կարձահասակ բանւոր Յարութիւնը անվստահ կերպով մօտեցաւ Աննային, առաջարկեց վայս պարելու:

Դժուհութիւնը ծածկելով. Աննան վերկացաւ և մի պտոյտ արեց նրա հետ:

— Բաւական է, ասաց Աննան, խաղը կիսատ թողնելով և նստելով իւր տեղը:

Նրան հետեւց Աղամը:

Աննան, մինչեւ անգամ չը թողեց, որ նա իրեն առաջարկէ. բարձրանալով ձեռքը տեղ նրան և սկսեցին պարել:

Մի քանի րոպէ առաջ, որ առաճութիւն էր զգում Աննան Յարութիւնի հետ պարելիս, այժմ, ընդհակառակը նա անչափ ուրախ էր Աղամի հետ պարելիս:

Աղամը շատ գեղեցիկ էր պարում, իսկ Աննան մոռոցել էր պարելը, նա հետեւմ էր Աղամին՝ ձեռքը դրած նրա ուսին:

Աննան հետաքրքրութեամբ նայում էր նրա աչքերին, կարծէր մի բան էր կամենում մտարերել այդ առնական գէմքին նայելիս:

իսկ Աղամը մեծ, վառվուն աչքերը նրանից չեր հեռացնում, ձեռքով ամուր գրկած լինելով աղջկայ իրանը:

Աննան շատ էր չարչարւում մտարերելու, թէ Բըր է տեսել այդ մարդուն, նրա կենդանի աչքերը, բայց իզնուր, ոչ մի վերջաւորութեան չեր յանդում:

Նւագածուները պարի եղանակը դադարեցրին, լուեց միայն ջութակի մեղմ ձայնը, որի վերջին խաղերը արձագանք էին տալիս անտառի խուլ կողմում:

Պարողները կանգ առան: Աննան կարծես քնից արթացաւ, իսկ նրա կաւալէրը արդէն անհետացել էր:

Ուրախութիւնը կանգ չառաւ, նորից լցւեցին դատարկ բաժակները դարեջով:

Ծերերը միմեանց պատմում և յիշում էին երիտասարդ ժամանակ անցկացրած այդպիսի տօննուրը, իսկ երիտասարդները ուրախանում և պարում էին:

Գործարանատէրը իւր կնոջ հետ մի քանի շրջան վալս պտոյտ եկաւ:

Անտառում վաղուց արդէն թռչունները քնից արթացել և սկսել էին իրենց ուրախ երգը: Երկինքը արենքում սկսեց քիչ-քիչ կարմրատակել: Մութը փախուստ էր տալիս դէպի հեռուն: Շուտով արեգակը իւր պայծառ դէմքը ցոյց կը տար, իսկ ինչոյքը դեռ առաջւայ նման շարունակւում էր:

Երիտասարդ բանւորներից մի քանիսը հէնց խնջոյքի կիսում աննկատելի կերպով հեռացել էին լճի մի ուրիշ կողմը, որտեղ կարապետի հրաւերով եկել էին նոյնպէս հարեան գործարանի բանւորներից:

— Անպայման եկէք, Աղամը պէտք է խօսի, ասել էր կարապետը նախընթաց օրը:

Աղամի մասին վաղուց էին լսել:

— Ուրախութեամբ կը դանք, համաձայնւել էին նրանք:

Գործարանատէր նիկոլան այդ օրը քաղաքից բացակայ էր. նա յարմար առիթից օգտւելով, գնացել էր Պետերբուրգ՝ պատւէրներ ընդունելու և իւր պատրաստի ապրանքը ծախելու:

Աղամը վաղուց նստել էր մի ծառի տակ, սպասելով ընկերների հաւաքւելուն, որպէսզի խօսէ:

Բոլոր երիտասարդ բանւորները գրեթէ հաւաքւել էին, մի քանիսը միայն մնացել էին խնջոյքում՝ աղջիկների հետ պարելու. նրանք աւելի գերագաս էին համարել ուրախանալ, քան թէ լսել օգտաւէտ խօսքեր:

Լծի միւս կողմից լսում էր նւագածուների ձայնը:

— Էնկերներ! լսեց Աղամի ձայնը, որ բարձրունալով իւր նստած տեղից աչք ածեց իրեն լսողներին: Ես ձեզ այստեղ հրաւիրել եմ միայն ի սէր գործի. առանց գործի՝ կեանքը դատարկ է: Դուք նոյնպէս գործում, աշխատում էք, այժմ տեսնենք, ումն էք տալիս ձեր աշխատանքի պառւղը, օգուտը, որի համար առաւօտից մինչև ուշ գիշեր չարչարւում, աննջւում էք, կորացնելով ձեր մէջը, կորցնելով ձեր առողջութիւնը, ոյժերը և երիտասարդութիւնը. ասացէք խնդրեմ, ձեր այդ չարչարանքի պառւղը նվ է վայելում:

— Ինարկէ գործարանատէրը, լսեց բանւորների ձայնը:

Աղամը մի քանի վայրկետն լոեց, որպէս զի իւր ասածները աւելի հասկանալի լինին նրանց:

— Ես էլ այդ հաստատում եմ. ձեր չարչարանքի մեծ մասը սաանում է գործարանատէրը, իսկ դուք, դուք ինչ էք ստանում. ստանում էք այնքան՝ որքան ձեզ կը բաւականայ մի կտոր չոր հաց ուտելու և ցնցուաիներից հագուստ ունենալու, իսկ ձեր ընտանիքը ինչնվ է ապրում:

— Է՞ն, այդ մի ասիլ, ասաց հարևան գործարանի բան-

ւորներից մէկը, մեր գործարանի բանւորները թէ իրենք և թէ իրենց ընտանիքը շատ լաւ են ապրում:

— Ելի՞, ասաց, լաւ, եթէ նրանք քաղցածութիւնից չեն մեռնում, ուրեմն լաւ են ապրում, ասաց բանւորներից մէկը կատակով:

— Սուտ ես խօսում, պարոն, հէնց, օրինակ, մէկը ես, ունիմ սեփական տուն, կով, ձի. էլ բնչն է ինձ պակաս:

— Ի՞նչ հարուստն ես եղել, էլ ինչու ես այստեղ իշղուր չարչարում, գնա քո տունը՝ քո ընտանիքի հետ հանդիսա ապրիր, ասաց Յարութիւնը:

— Ուրեմն հէնց այժմ էլ կարող ես այսաեղից հեռանալ, քանի որ դու շատ հանգիստ և ապահով կեանք ես վարում, ասաց բարկացած մի բանւոր:

— Ախր ես էլ եմ լսել կամենում....

— Լսիր, միայն լսիր. Սղամ, ի սէր Աստուծոյ, խօսիր, ի՞նչ ես ամեն մի գատարկ խօսքի համար կանգ առնում, շատապով ասաց կարապետը:

Աղամը հանգիստ կերպով սպասեց, մինչև որ նրանք կը հանդարտւէին, ապա ձեռքը բարձրացնելով ցոյց տւեց, որ կամենում է խօսել:

— Ձեր այդ տանջալի աշխատանքի համար ինչու գուք պէտք է մի չնչին գումար սատանաք, իսկ գործարանատէրը աւելի շատ. գուք կարող էք առարկել, որ գործարանատէրը իւր բոլոր ունեցած փողը և մթերքները զրել է գործարանում, որպէսզի աւելի շահ ունենայ. այդ ուղիղ է, նա էլ է չարչարում, բայց կշեռքի մի թառողիդ է, նա էլ է չարչարում, բայց կշեռքի մի թառում զրէք նրա ամբողջ կարողութիւնը, իսկ միւսում հարիւրաւոր մարդկանց չարչարանքը. Այժմ ինչ որ

Աղամը ասում է, բոլորը ուղիղ է, ասացին բանւորները,

միմեանց նայելով:

— Ուրեմն այդ կշիռը ի՞նչպէս հաւասարեցնել, հարցը Աղամը նրանցից:

Նրանք լուցին և սկսեցին շատ ցած խօսել միմեանց հետ:

— Ի՞նչպէս ես տեսնում եմ, դժւար է ձեզ այդ հարցի վճիռը լուծելը. ուրեմն այդ հարցի վերաբերմամբ թոյլ տւեցէք ինձ մի կողմնակի կերպով բացատրել, պարզել:

— Խօսիր, խօսիր, Աղամ, դու մեզնից շատ լաւ ես հասկանում այդ բոլորը, լուց բանւորների ձայնը:

— Մեզ բանւորներիս համար ամենից յարմարն է ունենալ կօպերատիւ ընկերութիւններ, բայց այժմ, երբ փողը արգէն իւր շղթայի մէջն է առել բոլոր Փիզիքական և մտաւոր չարչարանքները, շատ դժւար կը լինի մեզ առայժմ նրան հասնելու. գործարանատէրերը, կապիտալիստները հաշտ աչքով չեն կարող նայել այն բանի վրայ, որ բանւորն էլ իրենց նման հաւասար բաժին վեր առնէ. եթէ մենք սեփական փող ունենայինք՝ այն ժամանակ կարող էինք հէնց ինքներս այդ ընկերութիւնը կազմակերպել, բայց որտեղից, դուք փող չունիք:

— Ի՞նչ փող, մենք աղքատ մարդիք ենք:

— Ուրեմն մի ուրիշ միջոցի գիմենք, թէն ես կրկնում եմ, որ այդ ընկերութիւնները հիմնելու համար բոլոր գործարաններում շարունակ կուիւ են մղում. օրինակ, Բելգիայում քսան աարի շարունակ կուելուց յետ, այժմ այդ կօպերատիւ ընկերութեան անդամների թիւը երկու հազարից անց է կացել, գեռ էլի կուում են և յոյս կայ, որ մի օր բոլոր բանւորներն իրենց կը զգան ազատ՝ բոլոր կապիտալիստական ահարկու շղթայից. Ասացի որ մի ուրիշ միջոցի գիմենք. այդ միջոցը առայժմ կը լինի հանգիստ կերպով գիմել մեր գործարանատիրոջ, պահանջելով

աշխատավարձի յաւելում, ապա նրանից պատասխանի սպասել:

— Իսկ եթէ նա չը համաձայնւէ, ասացին մի քանի բանւոր:

— Այն ժամանակ գործադուլ կանենք, սպասելով որ գործարանատէրը խելքի գայ. առանց բանւորի նա ոչինչ անել չէ կարող և բացի դրանից, բանւորական աշխատանքի ամեն մի ժամը նրա համար շատ թանկ արժէ: Գործադուլի ժամանակ աւելի նա կը վնասւի, և այդ վնասները տանել չը կարողանալով, հաւանական է ձեր տուաջրկած պայմանները գործարանատէրը լնդունէ:

— Իսկ մենք ինչով կապենք այդ գործադուլի ժամանակ:

— Ես ձեզ խօսք եմ տալիս, որ «բանւորական միութիւնից» առաջին օրերի համար կարող ենք ազլուստի համար օգնութիւն ստանալ:

— Լաւ, իսկ յետոյ ի՞նչ կը լինի, հարցըին հարեան գործարանի բանւորները:

— Այն կը լինի, որ գործարանատէրը այդ գործադուլից խրառուած՝ յաւիտենապէս չէ կարող խրացնել բանւորների չարշարանքի արդիւնքը:

— Նա աւելի հեշտ և լաւ կարող է այդ անել. ճէնց այստեղ մեզ մօտ ի՞նչքան պարապ մարդ կայ. նա կը վարձէ նրանց և գործադուլ արած բանւորների փոխարէն կաշխատեցնէ:

— Այդ ժամանակ մարդիկ միայն կը փոխւին, մի խումբ գուրս կը գայ և մի ուրիշ խումբ կը բռնէ նրա տեղը, ասաց Յարութիւնը, որ մինչև այդ ժամանակ լուս կանգնած լուսմ էր:

— Ինչպէս նկատում եմ ես, գուք շատ վախկոտներէք, ասաց Աղամը, աչքերը այս ու այն կողմ դարձնե-

լով. Եթէ ուրիշ աեղերի բանւորներն էլ այնպէս մտածէին՝ ինչպէս այժմ դուք, այն ժամանակ նրանք կապիտալի յաւիտենական գերին, սարուկը պիտի զառնային: Լսած կը լինէք թէ Գերմանիայում ի՞նչքան լաւ վարկ ձեռք բերեց բանւոր գասակարգը. ծեր Բէլելը հպարտանում է, որ ինքն է եղել բանւորներին այդ սառը քնից արթնացնողը, ի մի ձուլելով նրանց և կոփւ յայտարարելով կապիտալի գէմ. իսկ Անգլիայում, Ֆրանսիայում, Բելգիայում...

— Բելգիայի համար մի խօսիր, ասաց հարեան գործարանի բանւորը: Տասը տարուց աւել է, որ այնտեղ գործը վճռւած և վերջացած է և այդ յօգուտ գործարանատէրների:

— Սիալ է, գու ստում ես:

— Ինչու համար պէտք է ես սուտ խօսիմ, կուզես ըոլուրը փաստերով ապացուցանեմ. բելգիական բանւորները վճռել էին գործարան չը գնալ, դա ճիշտ է, նրանք մի յանձնախումբ էին ընարել՝ որպէսզի իրենց այդ առաջարկները քննութեան ենթարկելը և դիմէր գործարանատէրներին:

Աղամը, տեսնելով, որ նա շատ հեռուն է գնում, իւր ներգործութեամբ բանւորների վրայ ազգելու համար, ասաց.

— Թողնենք Բելգիան, իսկ ի՞նչ կասես համատարած Ռուսաստանի համար. նրա ամեն վայըը բռնկւած է բանւորական շարժումով, օրօրի վրայ աւելանում և ցանցերով պատում է ամենուրէք:

Բանւորները մի փոքր առաջ սատնութեամբ էին լսում, այժմ կարծէք նորից վերակենդանացան:

— Բանւորական միութիւնը տարածւում է պլուղականդի միջոցով ամեն տեղ, շարունակեց Աղամը, բան-

ւորները անհամբերութեամբ սպասում են գործի պսակւելուն, արշալոյսին, հաւատացէք, նա հեռու չէ, ազատութեան և հաւասարութեան լոյսը շուտով պէտք է ծագէ, այդ ես ասում եւխոստանում եմ ձեզ մօտիկ ապագայում:

— Խոստանում ես, բայց կու ով ես, հետաքրքիր է իմանալ, ծիծաղելով ասաց մի բանւոր:

— Ես ով եմ, ես քանւորական միութեան անդամներից եմ, իմ անունս և ով լինելու ձեզ հարկաւոր չէ, ես այս եմ, որ տւեց ձեզ ինչ որ գիտէր և ունէր. փայլուն ապագայ խոստացողն եմ, որը բոլոր մեզուներին ախորժելի է, նրանցից եմ, որոնք չարչարւում և տանջւում են ապատութեան և հաւասարութեան համար:

Նրա գեղեցիկ և ազդու խօսքերի տակ լսողները կարծէք շաբար էին. ծառերի կատարների վրայ երևացին արեգակի առաջին ճառագայթները.

— Բնկերներ, ահա արեգակի փայլուն և առաջին ճառագայթները թող օրինակ լինին մեր բաղձալի ազատութեան և հաւասարութեան. կեցցէ հաւասարութիւնը և ազատութիւնը:

Բոլոր բանւորները միասին սկսեցին ապագակել Աղամի վերջին խօսքերը:

— Լաւ են խմել, ասաց Իրօլիանինը՝ նայելով գատարկ տակառներին, երբ լսեց երիտասարդ բանւորների աղաղակը. հանգստանալ է հարկաւոր, արեգակն էլ արդէն ծագել է, շարունակեց նա, ուղերւելով դէպի տուն, որտեղ քիչ առաջ գնացել էին իւր կինը և երեխաները:

Հեռուում, ծառերի տակ մամուռի վրայ մի բանի բանւորներ կային, որոնք լսութեամբ էին տօնում այդ տօնը, որոնց թւումն էր թովմասը:

Իրօլիանինը հազիւ թէ պառկել էր քնելու, երբ նրան սկսեցին արթնացնել: Նա չէր կամենում աչքերը բաց

նել. Նրա մահճակալի մօտ կանգնած էր ծեր և հին աղախին Սանամը:

— Ի՞նչ ես ուզում, նարցրեց նրանից դժգոհ կերպով: Պառաւը շփոթեց:

— Ի՞նչ, ապա, ի՞նչ է պէտք:

— Գործարանի բանւորները եկել և ձեզ են խնդրում տեսնել:

— Ի՞նձ, նրանք այժմ ինձ ի՞նչ պէտք ունին. հա, հասկացայ, ինչպէս երեսում է, նրանք դեռ լաւ չեն խմել, գնամ, Սանամ, մառանը, այնտեղ երկու տակառ գարեջուր կայ, մէկը տուր նրանց թող տանեն խմեն. իսկ միւսը թող մնայ, ձեռք չը տաս. տասց նա, շուռ գալով միւս կողքին և խոմքացրեց:

Երկար քնել չը կարողացաւ. Սանամը վերադառնալով, կրկին արթնացրեց նրան:

— Նրանք գարեջուր չեն ուզում, այլ ձեզ են կամենում տեսնել, ասաց Սանամը վախճելով:

Իրօլիանինը սկսեց քաղցրութեամբ յօրանջել. ուսքը դրաւ յատակին և նրանից հարցրեց:

— Ի՞նձ, գարմանալի է, ես նրանց ի՞նչ պէտք եմ այժմ. Եթէ նրանք կամենում են այսօրւայ խնջոյքի համար շնորհակալութիւն յայտնել, այդ վաղն էլ կարող են անել, էլ ի՞նչ են այժմ հաւաքւել այստեղ և թոյլ չեն տալիս հանգստանալու:

Բայց և այնպէս նա շտապով հագնեց և գուրս եկաւ պատշգամբ: Հրապարակում հաւաքւել էին բաղմաթիւ բանւորներ. հետաքրքրութեան համար եկել էին նոյնպէս հարկան գործարանի բանւորները:

— Ներեցէք, որ մենք ձեզ թոյլ շր տւինք հանգստանալու, կարիսը և անհրաժեշտ գործի համար ենք եկել այստեղ, ասաց Կարապետը:

Իրօլիանինը շարունակ յօրանջում էր, նու սաստիկ քնել էր ուզում:

— Խօսիր, ի՞նչ անհրաժեշտ գործ է. իսկ մատեալի համար վաղն էլ կարող ենք խօսել, ասաց Իրօլիանինը ծուլութեամբ և նստեց պատշգամբում եղած աթոռակի վրայ:

— Տեսնում էք, խազէին, ձեզ մօտ մենք ինչպէս ենք աշխատում, չարչարում. եթէ գուք մեր տանջանքներն իմանայիք...:

— Ի՞նչ երկարաբանութիւն, կտրեց նրա խօսքը Յառաւթիւնը, ամենից լաւ է Աղամը խօսէ. խօսիր Աղամ, և նա հրեց Աղամին առաջ:

— Տէր, մենք եկել ենք ձեզ մօտ՝ գործին վերաբերեալ լուրջ խօսելու, լուեց Աղամի սուր ձայնը:

Նրա ձայնից Իրօլիանինը սթափւեց և լրջացաւ նայելով խօսակցին:

— Մէր աշխատավարձը չափազանց քիչ է, որպէսզի նրանով կարողանայինք թէ մեզ և թէ մեր ընտանիքը կերակրել. գուք լաւ շահում էք, այդ ի նկատի ունենալով, մենք եկել, խնդրում ենք ձեզնից, որ ձեր վեր առած շահից մի մասն էլ մեզ բաժին հանէիք, այն ժամանակ գունէ քիչ հաւասարութիւն կը լինէր. ես արդէն ասելիքս վերջացրի:

Աղամի խօսքերը լսելով՝ Իրօլիանինը ներքուստ շատ զայրացաւ, բայց արտաքուստ իրեն զսպեց:

— Ի՞նչպէս երկում է, Աղամ, գու մեր գործարանի գործերին լաւ ծանօթ չես, բայց որանք, ցոյց տալով բանւորներին, շատ լաւ գիտեն իմ բոլոր գործերիս և շահիս մասին. նրանք զիտեն, որ ամեն մի ըստէ կարող են գալ իմ գրասենեակը, նայել գործարանի հաշիւներին, մութէ կէտերը հարցնել, տեղեկանալ. շատ անդամ են տեսել և

քննել իմ հաշւետերակները և լաւ հասկացել են, որ ամենաչնչին աշխատավարձի յաւելումով ես ստիպւած կը վնեմ գործարանը վակելու և գործը դադարեցնելու. այսինքն գործարանս փոխանակ շահ բերելու՝ օր օրի վլայ կը սկսի վնասւել, իսկ ո՞ր գործն է վնասով շարունակւում...:

Հակառակ իւր սպասածին, այս անգամ Իրօլիանինը տեսաւ, որ ամբոխը չէ կամենում համոզւել իւր խօսքերից՝ առանց փառտերի. այն ժամանակ նա կրկին դիմեց Աղամին:

— Հակառակ գէպքում, հէնց այժմ կարող եմ քեզ անձամբ ցոյց տալու մեր գործարանի հաշիւները և որից գու կը համոզւես իմ ասածների ճշառութեանը. ուրեմն գնանք:

Իրօլիանինը պատշգամբեց ցած իջնելով, զնաց գէպի գործարան, որին հետևեցին բանւորները իրենց առաջնորդ ունենալով Աղամին:

Համնելով զրասենեակի մօտ, Իրօլիանինը սկսեց տշմուր կերպով թակել Աննայի ննջարանի սենեակի պատուհանը:

— Աննա, Աննա, վեր կաց, շուտ, հագնուիր և եկ գրասենեակ:

Քնած աղջիկը արթնանալով՝ սկսեց հագնուել. գուրս գալով, գրասենեակի գուաը բաց արեց, որտեղ իւր հայրը ժպիտն երեսին ասաց.

— Աննա, Աննա կամենում է գործարանի տետրերը և հաշիւները տեսնել, համոզւելու համար, թէ արգեօք կարելի՞ է բանւորների աշխատավարձը աւելացնել, թէ ոչ:

Աննան լուս կերպով սկսեց արկդներից գուրս բերել հարկաւոր հաշիւների տեսրակները:

— Հին հեգնանք, որը կամենում են քո գլխին էլ բերել, ասաց Յարութիւնը Աղամին, նրանց հաւատ մի ըն-

Ճայիր, ասում են:

— Նրանց մի լսիր, Աղամ, նրանք մեզ միշտ այդ գատարկ հաշիւներով, մեծ մեծ զրքերով են քնեցրել, քեզ էլ ինչպէս երևում է, պիտի խարեն, ասաց մի ուրիշ բանւոր:

Բայց Աղամը յափշտակւած էր գեղեցիկ Աննայով. իւր ընկերների ասածը գրեթէ չէր լսում. նա աչքերը չէր հեռացնում Աննայից, որը այժմ աւելի գեղեցկացել և հրապարիչ էր դարձել Աղամի համար.

Շտապով վեր կենալիս, Աննան մի շրջազգեստ էր հագել, որի թափանցիկ կտորից երևում էր աղջկայ նուրբ կազմւածքը. ծածկել էր զլխին մի հասարակ թաշկինակ, որի տակից անինամ կերպով դուրս էին թափւել նրա խտ, փայլուն մազերը. նա այդ գիրքով Աղամի համար մի կենդանի պատկեր էր ներկայացնում:

— Նայեցէք, ասաց Աննան չոր կերպով Աղամին. ահա շաբաթական տեղեկագիրը, որի մէջ պարզ կերպով գրւած է բոլոր մի շաբաթւայ ծախքերը մթերքը, ապրանքը, զործարանի ունեցած շահը, բանւորների աշխատավարձը, փոխազրութեան ծախքերը և այլն և այլն. իսկ այստեղ դրւած է պատրաստի ապրանքը՝ օրական արժեքով գնողների համար:

— Հասկացաք, ասաց Աննան Աղամին, որը արագութեամբ սկսեց ծածկել տեարակները:

— Այնքան էլ ոչ, լսւեց Աղամի ցած ձայնը. ես տեսրակներից ոչինչ չեմ հասկանում և առաջւայ պէս կըրկնում եմ, որ զործարանատէրը պարտաւոր է բանւորների աշխատավարձը աւելացնելու:

Աննան ուսերը վեր քաշելով, ասաց.

— Տարօրինակ կամակորութիւն:

Ինչպէս երևում է, Աղամը կամեցաւ նրան ինչ որ

պատասխանել, բայց իրեն գսպելով՝ գրասենեակից գուրս եկաւ բակը, որտեղ բանւորները նրան սպասում էին:

— Հը, Աղամ, ինչ եղաւ, նրանց հաշիւներից մի բան կարողացմը հասկանալ, ասաց գրասում կարապետը:

Յարութիւնը և միւս բանւորներն էլ հարցական և անհամբեր աչքերով նայում էին Աղամին, կարծէք հարցնելու, թէ ինչպէս եղաւ, յաջողւեց. իսկ վերջինս, ինչպէս երևում էր, տատանում էր ուղիղ պատասխան տալու:

— Նրանց աեարակներից ինչ կարելի է հասկանալ, գործարանատէրը պարտաւոր է անպայման աշխատավարձը աւելացնել, որիշ ոչինչ:

— Ինարկէ պարտաւոր է, անպայման պարտաւոր, սկսեցին գոռգոռալ բանւորները, որոնց զայրոյթը դէպի Իրօլիանինը աւելի շատացաւ:

— Թող աւելացնէ, հակառակ դէպքում մենք չենք գնալ գործարան գործելու, ասաց բանւորների մի մասը:

— Ի՞նչ հարկաւոր է առաջուց այդպէս սպասնալ, մենք նրան մեր պայմանները կառաջարկենք, թող նա էլ մտածէ, կարելի է զործը աւելի հանգստութեամբ վերջացնել, ասացին աւելի զգոյշ և փորձւած բանւորներ:

— Ռւենին, Աղամ, գնա զործարանատիրոջ հետ իօսմիր մեր կողմից. զու ամենքիցս խելօք և լաւ ես, ասացին բանւորներից շատերը:

Գոհ, բոլորի հաւատարմութիւնը ուղղւած լինելուն դէպի իրեն, Աղամը գնաց զործարանատիրոջ մօտ, որը սկսեց աչքի տակով նայել նրան:

— Ահա նրանց պարագուխը և խառնակիչը, ասաց Յովինաննէսը ցած ձայնով գործարանատիրոջը:

— Գիտեմ, կարճ ասաց նա:

— Տէր, բանւորները լիակատար իրաւունք են տւել

ինձ ձեզ յայտնելու, որ նրանք կրկին ձեր գործարանում՝
կաշխատեն, եթէ աշխատավարձը կրկնապատկւի...:

— Իսկ եթէ ես չը համաձայնւեմ:

— Միենոյն է, ձեզ ժամանակ ունիք այդ մասին մտա-
ծելու, այսօր արդէն գործարանը փակ է:

— Իսկ եթէ մինչև վաղն էլ ես չը համաձայնւիմ և
պատասխան չը տամ:

Աղամը դէմքը խոժոռելով առաց.

— Այն ժամանակ մեզնից ոչ ոք գործարանում չի
աշխատիլ՝ մինչև որ դուք չը համաձայնւէք մեր արդար
պահանջները կատարելու:

Գործարանատէրը վաղուց այդպիսի պատասխանի էր
պատում. նա մտածել էր՝ աւելի հանգիստ և խորաման-
կութեամբ պատասխանել.

Էհ, ինչ արած, զբոսնել, ուրախանալ էք ուզում-
շատ բարի, ուրախանանք, մի քիչ էլ կը հանգստանանք,
խօմ տարին տասներկու ամիս չենք չարչարւելու. շատ
լաւ չք մտածել, ասաց Միքայէլը հեզնանքով: Իսկ ներ-
քուստ նա չար դաւեր էր պատրաստում նրանց համար:

Չորրորդ օրն էր, որ գործարանը անգործութեան էր
մատնւած, լոել էին բոլոր գործարանի անիւների և մե-
քենաների միանւագ ճռճոցները:

Ոչ բանւորներն էին զիջում և ոչ էլ գործարանա-
տէրն էր կամենում նրանց պահանջներին բաւարարու-
թիւն տալ:

Հարկան գործարանատէր Նիկոլան իզուր տեղը մի
քանի անգամ աշխատեց միջնորդել բանւորների և գոր-
ծարանատիրոջ միջն. բանւորները յամառութեամբ շա-
րունակում էին գործադուլը: Իսկ ապրուստի համար, ինչ-
պէս Աղամը խոստացել էր, նրանք ստանում էին բան-
ւորական միութիւնից:

Պատահում էր երբեմն՝ ծեր բանւորները գալիս էին
գործարան, բայց երիտասարդ բանւորները նրանց հետա-
ցնում էին սպառնալիքով:

— Եթէ դուք կրկին այստեղ գալու լինէք, հաւատա-
ցէք, ձեր ծերութեանը մտիկ չենք տալ և սասափիկ կը
թակենք:

Այդ սպառնալիքներից վախեցած՝ նրանք այլևս չէին
երեսում գործարանում:

Հարկան գործարանը եռանդով գործում էր, միայն
մի քանի հոգի նրա բանւորներից եկել միացել էին բան-
ւորներին: Նիկոլան մեծ և շահաւէտ պատւէր ընդունած
լինելով, ինքը ժամանակին շտապեց յայտնել իւր բոլոր
բանւորներին աշխատավարձի յաւելում, վախենալով, որ
մի գուցէ իւր բոլոր բանւորներն էլ օրինակ վեր առնե-
լով հարկան գործարանի բանվորներից, կարող են շատ
մեծ վսաններ տալ: Բայց նրա վախը անտեղի էր. իւր
գործարանի բանւորների մեծամասնութիւնը այդ քաղա-
քումն էր ապրում ընտանիքով, որոնք սովորել էին ան-
դին, սովորութիւններին. ամենից զլիաւորը՝ նրանց մէջ
մեռել էր ապատ և հանդիստ ապրելու բնագդը. ուստի
հազիւ թէ նրանք վճռէին այդպիսի մի քայլ անելու:

Իրոլիիանինը ինչքան իրեն արտաքուստ անտարբեր և
լաւ էր ցոյց տալիս, բայց ներքուստ տանջւում էր. նա
մի քանի անգամ գործակատար Յովհաննէսի և իւր աղ-
ջկայ հետ խորհրդակցեց, թէ ինչ միջոցով կարող է այդ
բոլորի առաջն առնել. Յովհաննէսը չարչարւում էր մի
ելք մտածել, իսկ Աննան շտա անտարբեր և սառն էր
վերաբերում այդ հարցին, ինչ որ շտա զարմանալի էր
թւում իւր հօրը:

— Գիտես, Աննա, ես ինչ եմ մտածել. թող Յովհան-
նէսը սկսէ նոր բանւորներ վարձել, իսկ ես կը զնամ գա-

ւառապետի մօռ՝ խնդրելով որ նա անձամբ գայ այստեղ և մեր բանւորների պարագլուխ և վատ մտքեր արծարծող Ագամին այստեղից դուրս վոնտէ. այսպէս լաւ չէ:

Չէ, հայրիկ, այդպէս մի անիլ, ասաց Աննան տիրութեամբ:

Ի՞նչու, ահա քեզ տարօրինակ բան, բացատրիր, թէ ինչու:

Աղջիկը շփոթւեց, նա չը կարողացաւ ոչինչ պատասխանել:

— Երան այստեղ կալանաւորւելով, կը տանեն և հարցաքննութեան կը ենթարկեն՝ իւր խոռվարար ճառերի և խառնակիշ բանւորութեան համար, ապա բանտարկելով կառեն գոնա և ապաշխարիր քո մեղքերը». ես շատ լաւ եմ ճանաչում մեր բանւորներին, աղջիկս, հաւատացիր, նրանք առանց առաջնորդի, ոչխարներ են:

Գործարանատէրը հէնց այդ օրը գնաց գաւառապետի մօռ. Աննան այլևս չաշխատեց նրան այդ քայլից հեռացնելու: Չափազանց ախուր և մտածկոտ կերպով նա իւր հօրը ճանապարհ գրեց:

Գործարանատէրը մինչև գիշեր չէր կարող վերադառնալ, որովհետեւ գաւառապետն այնքան էլ մօտիկում չէր ապրում:

Մի ուրիշ սայլով ճանապարհեց Յովհաննէսը, իւր տիրոջ կարգադրութեամբ նոր բանւորներ վարձելու:

Գործարանի բանւորներն ամեն ինչ արդէն հասկացել էին:

Աննան, իւր հօրը ճանապարհ գնելուց յետոյ, վերադառ գրասենեակ, որտեղ նրա երեք գործակատարումիները ջանափրութեամբ աշխատում էին. չը նայելով գործադուին՝ նրանք գեռ ևս շատ գործեր ունեին կատարելու:

Աննայի միտքը բոլորովին ուրիշ տեղ էր. նա ոչինչ չէր հասկանում իւր առաջը թափւած հաշետեարերից. նա այդ բոլորը մի կողմը թողած՝ մտածում էր այդ խորհրդական ճառախօս Ագամի մասին:

— Տէր Աստւած, ախր ես նրան մի տեղ տեսած և լսած կամ նրա ձայնը...:

Ելեքտրական զանգի միջոցով Աննային լուր տւին գնալ տուն ճաշելու: Նա մեքենայի պէս շտապով գնաց տուն ճաշեց, թէյ խմեց, խօսեց իւր մօր և երեխաների հետ, չը մոռանալով ոչ մի բոպէ Աղամին, նրան յիշելու:

Նա վերադառնալով գրասենեակ՝ մի քանի բոպէ խորասուզւեց մտքերի մէջ. ապա նա դարձաւ գործակատարուհիներին.

— Այսօր շուտ գնացէք, կարող էք կիսատ մնացած գործերը վաղն՝ էլ կատարել:

Գործակատարուհիները գնացին: Աննան մենակ մնաց գրասենեակի ամայի շինութեան մէջ:

Հրաշալի երեկոյ էր:

Նա կամմեցաւ մի ինչ որ գործով զբաղւել, աշխատել, բայց ոչինչ անել չը կարողացաւ. մի ինչ որ բանի վրայ էր մտածում, ինքն էլ չը գիտէր, թէ ինչ էր մտածում. նա պատրաստ էր լաց լինելու....:

Արեգակը արդէն մայր էր մանում. նրա վերջին ճառագայթները գեռ լուսաւորում էին սլարդ երկնքը և բարձր ծառերի կատարները: Սագաֆի գոյն ունեցող թեթև ամպեր քշւում էին երկնքի վրայից այսուայն կողմ:

Աննան նստել էր բաց պատուհանի առաջ և հետաքրքրութեամբ նայում էր արեգակի մայր մտնելուն, հրաշալի վերջալոյսին. նրա ջղերը հանգստացան, նա մի տեսակ անդորրութիւն զգաց, իսկ իւր մտքերը սլացան շատ հեռու....:

Կապոյա և պարզ երկնքի վրայ երևաց լիալիք լուսինը:
Գրասենեակի բաց պատուհանից լուսում էր գետի ուժ-
քին և աղմկալից հոսանքի ձայնը:

Երեկոյեան ցողը պատել էր ամենութեք:

Աննան, փոխանակ սարսոտլու, շատ խաղաղ և հանգ-
դիսու կերպով լուսում էր գետի այդ աղմկալից հոսանքը և
հանգստութիւն զգում. նա սիրում է ժամերով նստել և
լսել այդ ձայնը. կարծէք նրա մէջ էր լուսում, տեսնում
իւր ապագան...:

Ամեն բան լուսութեան մատնւեց:

Աննան նստած տեղից յանկարծ վեր թռաւ. մի ինչ
որ բան, ինչ որ մարդ նշմարեց գործարանի հրապարակի
վրայ՝ որը գողունի և թեքւած, գնում էր գէպի գետափը:

Նա մտածեց, «չը լինի չարութեամբ մէկն ու մէկը
մտածում է վնասել մեր գործարանը». այդպէս մտածե-
ցու իրաւունք ունէր, քանի որ գործարանի միակ բնակիչ
Յովհաննէսը այդ օրը բացակայում էր. ուրեմն մի չարա-
գործ դրանից յարմար ժամանակ չէր կարող գտնել իւր
չարութիւնը ի կատար ածելու.

Նա շտապով գուրս եկաւ գործարանի բակը, մոռա-
նալով մինչև անգամ կողպել գրասենեակի դուռը:

Մինչև այդ խորհրդաւոր մարդուն հասնելը՝ երկար
չէր տեել:

Աննան շտապով գնում էր, աշխատելով ոչ մի աղ-
մուկ և ոտնաձայն չը հանել, շարունակ իւր անթարթ աշ-
քերով այդ խորհրդաւոր մարդու քայլերին հետամուտ լի-
նել. մի երկու քայլ և... Աննայի սուր աչքերը կարողա-
ցան ճանաչել Աղամին. Միտքամանակ թէ այնքան տան-
ջալի յիշողութեան համար, որին օգնութեան էր դիմում
երկար նա, թէ Աննայի համար վերջապէս պարզէց, որ
այդ հասարակ բանւորը՝ ծածկւած հասարակ բանւորա-

կան հագուստում, այդ նա էր...:

Այն, սա նա է, անկատկած ինքն է որ կայ. ինչ
տարօրինակ բան, ի՞նչպէս ես չեմ կարողացել մինչև այ-
սօր նրան ճանաչել, հէնց նրա փայլուն և գրաւիչ աչքե-
րիցը կարելի էր ճանաչել. երկար ընչացքը երկար տարի-
ներ անջատած լինելով միմեանցից՝ խտացել և երկարա-
ցել են, ինչ որ նրա կերպարանքը քիչ ու շատ փոխում
է. բայց նրան ճանաչելն այնքան էլ գժւար չէր, ոհ, ինչ
բախտաւորութիւն, յիմար եմ եղել ես, իսկական յիմար...:

Նա թագնւելով թփերի խիտ արանքում, մօտեցաւ
Աղամին:

Վերջինս նայելով իւր շուրջը և հուատացած լինելով,
որ ոչ ոք չկայ շրջակայքում, ամբողջ մարմնով ուղղեց
և շտապով սկսեց իւր մտադրութիւնը իրագործել:

Նա ունէր ձեռքին բռնած մի կարճ երկաթեայ բան,
որով սկսեց ամենայն արագութեամբ քանդել գործարանի
ջրանցքի պատը: Նա շատ լաւ հետախուզել, քննել էր
այդ իւր ձեռնարկած գործը. ջրանցքի պատը ոչ այլ ինչ
էր՝ եթէ ոչ քարերի մի ամբողջ կոյտ. Նա սկսել էր քան-
դել, դուրս բերել յատակի մի քանի քարերը, որոնք պոկ
գալով միւս հաւաքւած քարերն ես կը փլչէին. Ջրի ուժ-
գին հոսանքից և բաց կանէին մի ապատ անցք գետի յորդ
հոսանքի համար: Նրա յատակագիծը շատ հասարակ էր,
բայց շատ մեծ վնաս կարող էր հասցնել գործարանին:
Քանդած ջրանցքից ջուրը կը սկսէր արագութեամբ հո-
սել գործարանի երկու շինութիւնների մէջ, հիմնայատակ
անելով բոլոր ինչ, իսկ մի մասն էլ կը թափւեր գործա-
րանի անիւների վրայ, ջարդ ու փշուր անելով բոլոր մե-
քենաները:

Աննան սկսած գործարանին հասնելիք վասնգը,
իսկոյն դուրս եկաւ թփի տակից, հանդարտորէն մօտեցաւ

Աղամին. ձեռքը նրա ուսին դնելով խիստ կերպով ասաց.
— Ալեքսան, այդ ի՞նչ ես անում:

Բանւորը յանկարծակի եկածի նման, բաց թողեց
իւր ձեռքից բահը և սկսեց ապշաճար նայել աղջկան, շուռ
եկաւ և ասաց ինքն իրեն.

— Ճանաչեց:

— Լսիր ինձ, Ալեքսան, զու մեզ մօտ եկել ես ինչ-
պէս մի գող, ծածկւած ուրիշի անւան տակ, հագած ոչ
թէ քո խսկական հագուստը, այլ հասարակ բանւորի. ես
քեզնից չեմ հարցնիլ թէ այս բոլորը ինչի համար ես ա-
րել. պարզ է այդ բոլորը ինձ համար: Դու վարակւած ես
ընդգէմ կապիտալիստին՝ հասարակ և բանւոր դասակար-
գին պաշտպանելու և արթնացնելու իդէալական զաղա-
փարներով: Այդ գաղափարական կոիւր և իդէալը քեզ
կաշկանդել, ստրուկ է դարձել. քո մէջ գեռ թարմ կեր-
պով պահւում է քո նախնիքների անվախութիւնը: Դու-
համալսարանում այնպէս եռանդով սովորում էիր բոլոր
էլեքտրական և մեքենավարական դասերը, այժմ այդ բո-
լորը իրականացած չեն. քո բոլոր յոյսերը, ինչպէս տես-
նում եմ, օդն են ցնդել, անհետացել... բայց կարող է
պատահել, որ զու իրաւունք ունիս այդպէս վարւելու,
թէն ուրիշ մարդկանց համար շատ գժւար է այդ բանը
վճռելը, նամանաւանդ ինձ, կնոջո համար:

Մի քանի վայրկեան Աննան լուեց, լուել էր և Ալեք-
սանը:

— Ես քեզ համալսարանում ճանաչեցի իրեկ ամենա-
ագնիւ, բարի երիտասարդի և պատրաստ՝ զոհւելու ամեն
մի դէպում քո ընկերոջ համար. ես քեզ հետ ծանօթա-
ցայ և այդ ծանօթութեամբ ես հպարտանում էի իմ շըջա-
նի ընկերներիս մէջ. քեզ աւելին կասեմ, եթէ ես իմ
կեանքում վճռած լինեմ ինձ ընկեր, ամուսին ունենալու,

այդ միայն դու կը լինես, Ալեքսան:

Աննան, առանց ամաչելու խօսում էր իւր այնքան
փայփայած և բոլորից գաղանի պահած մտածմունքների
մասին. միայն խօսելիս նա քիչ կարմրեց և կուրծքն էլ
սկսեց արագութեամբ բարձրանալ ու ցածրանալ:

Ալեքսանը կանգնել էր լուս և զլուխը քաշ ձգած:

Միթէ ես սխալւել եմ քո վերաբերմամբ: Դու մեր
հանգիստ և խուլ վայրում կամենում ես շփոթութիւն ա-
ռուջ բերել. բաժանում ես գործարանից բանւորին, որն
ապրուստի ոչ մի միջոց չունի: Ես մինչև այսօր սուտ
չեմ խօսել, գրասենեակում քեզ ցոյց տւած բոլոր հաշիւ-
ներն ուղիղ էին և ես թոյլ չեմ տալ իմ հօրը, որ նա
բանւորների հետ վարւէ այնպէս, ինչպէս կաթնասու կո-
վերի հետ. զու ինքդ էլ համոզւեցիր, որ ամենաչնչին աշ-
խատավարձի աւելացումով, գործարանն ստիպւած կը լի-
նի փակւելու:

Պարզ կերպով ես այդ բոլորը տեսայ, ձեզ հաւա-
տացի, որ ոչ մի կեղծիք չկար ձեր հաշիւներում, ասաց
Ալեքսանը ցած ձայնով, որ մինչև այդ ժամանակ լուս
կանգնած էր:

Բայց դու չը զլացար քո ասածը. յամառութեամբ
առաջ տանելու և այդ խեղճ մարդկանց խարելու, անւա-
նելով մեր բոլոր հաշիւները կեղծ: Միթէ դա ազնու-
թիւն է. այդպիսի քայլ ես կարող էլ քեզնից սպասել:

Դու պէտք է ինձ լաւ հասկանաս, Աննա. զու, ես
և քո հայրը բոլորովին ուրիշ ենք, աննկատելի այն արա-
գավադ կեանքի անիւի գիմաց, որը միշտ դէպի առաջ է
մզւում և նոր, աւելի փայլուն ապագայ է խոստանում:
Կարող եմ ես մի քանի մարդկանց համար մտածել հան-
գիստ, անդորր և ուրախ կեանք, որոնք իրենց կամակո-
րութեամբ կարող են փչացնել ընդհանուրի շահերը: Եւ

ես ինձ իրաւացի չեմ համարում այդպէս վարւելու: Քո հայրը իւր կամակորութեամբ ինձ իւր գէմ զինեց, ես շատ լաւ զիտեմ, որ նա չէ կարող մեր առաջարկած պայմաններն ընդունել: Թող նրա գործարանը տակնուվար լինի, չքանայ իւր առաջւայ համդիստ ու խաղաղ կեանքը, դա ուրիշներին օրինակ կարող է զատնալ. այս ժամանակ բանւորներից շատերը իրենց առաջ կարող են տանել, դա ընդհանուրի համար շահաւէտ կը լինի: Եւ վերջապէս ես նւիրւել եմ այս գործին հոգով և մարմնով. ոչ մի արգելք չէ կարող իմ առաջն առնել: Ես էլ քեզ սիրել փայփայել եմ, բայց պաշտպան համդիսանալու ագէտ և իրեն շահերը չը հասկացող դասակարգի համար՝ իմ անձն եմ գրել ամբողջապէս նրա տրամադրութեան ներքոյ: Մենք երկուսս ժամանակի ընթացքում կարող ենք շատ երջանիկ լինել. առա ի՞նչ կանես դու մեզ պէս սիրով տոշորւած և ապերջանիկ մարդկանց համար, որոնք տանջւում են, չարչարւում, էն, երկար խօսելը կարծում եմ աւելորդ է:


Նա կրկին սկսեց իւր կարճ բահով քանդել ջրանցքի պատը:

— Ա՞նխելք, դու մոռանում ես, որ ես այստեղ եմ, որ թոյլ չեմ սալ քո մտածած չար գործը առաջ տանելու, ասաց Աննան սաստիկ բարկացած:

— Այստեղ եկէք, այստեղ, աղաղակեց աղջիկը աշխատելով դուրս քաշել նրա ձեռքի բահը:

— Ի՞նչան ուզում ես աղաղակիր, կանչիր, քեզ ոչ ոք օգնութեան չի գալ, դու ինքդ էլ զիտես, որ գործարանում այժմ ոչ ոք չըկայ:

Աննան իւր ոյժերը հաւաքելով, բռնեց Ալեքսանի ձեռքը, աշխատելով՝ արգելել նրա կողմից ջրանցքի պատին ուղղւած քանդիչ հարւածները:



Ջրանցքի նեղ անցքի վրայ նրանք սկսեցին քաշկուտել: Աննան աշխատում էր նրա ձեռքից բահը խել, իսկ Ալեքսանը ամուր կերպով պաշտպանում էր ձեռքից բաց չը թողնելու բահը. աշխատում էր նրա ուժեղ ձեռքերից դուրս պրծնել, որոնցից ազատւելու համար, նա կամեցաւ անցնել գետի միւս ափը. նա ոտքը գրաւ գետի մէջ եղած մի քարի վրայ, որպէսզի նրա վրայով թռչէ այն միւս ափը, յանկարծ քարը տեղահան եղաւ, սահեցաւ, իսկ Ալեքսանը վայրենի աղաղակով տապալւեց ջրի մէջ...:

Հազիւ ոտքի վրայ կանգնելով. նա կատաղի կուր էր մզում ջրի հոսանքի հետ, որը նրան ինչպէս մի փայտեայ տաշեղի, այս ու այս կողմն էր ձգում:

Ջրանցքի պատը արգելն նրա հարւածներից թուլացած լինելով՝ փուլ եկաւ և ջրի մի առատ հոսանք սկսեց դէպի առաջ, որտեղ դեռ կուռւմ էր Ալեքսանը՝ ազատւելու յոյսով. ջրի սաստիկ հոսանքը նրան ծածկեց...:

Աննան վայրենաբար նայում էր այդ տեսարանին. նա սպասեց՝ կրկին տեսնելու այդ սկ ասարկան ջրի երեսին կուելիս, բայց արգեն ուշ էր...

Ալեքսան, Ալեքսան, Աստւած իմ, այս ի՞նչ արի ես, ասաց Աննան թոյլ և գողգոջուն ձայնով և ոչինչ չը տեսնելով ու չը մտածելով, բոպէապէս իրեն նետեց գետի մէջ...:

Մոայլ լուսինը առաջւայ նման լուսաւորում էր իւր շրջակայքը:

Նա տեսաւ, վկայ եղաւ, այդ երկու սիրատոչոր և տանջւած զոհերի զիակներին, որոնք ընկել, զոհւել էին միայն՝ աշխարհում եղած տանջանքով իլ կարգերը բարեփոխելու պատճառով....



ուստից միջնորդ զենքը լայն պարուն թե օգուտուց
բայ ուրիշ ուստի ուղի ով և ուստի առաջնորդ
պայ պարուն ով և ուստի առաջնորդ պարուն պարուն
պարուն ուղի ով և ուստի առաջնորդ պարուն ու
առաջնորդ ուղի ուստի առաջնորդ պարուն ու պարուն ու
ուստի առաջնորդ ուղի ուստի առաջնորդ պարուն ու

առաջնորդ պարուն ուղի ուստի առաջնորդ պարուն ու
ուստի պարուն ուղի ուստի պարուն ուղի ուստի պարուն ու
պարուն ուղի ուստի պարուն ուղի ուստի պարուն ու
ուստի պարուն ուղի ուստի պարուն ուղի ուստի պարուն ու
պարուն ուղի ուստի պարուն ուղի ուստի պարուն ու

ուստի պարուն ուղի ուստի պարուն ուղի ուստի պարուն ու
պարուն ուղի ուստի պարուն ուղի ուստի պարուն ու



ALOG8840

ՄԱ Հայագիտական գրադարան



MAL008846

